

ՀՅԴ Պատմութիւն



ԴՐՕՇԱԿ







Մարտ N03 (1618)

2010

ԴՐՈՇԱԿ

ՀՅԴ Պատմական թերթ

ԴՐՕՇԱԿ

ՀՅԴ Պաշտօնաթերթ



Խմբագրական

Քաղաքական գարնանամուտ 2

Հարցազրույց

Հայ ժողովրդինն է այս հայրենիքը 4

Տեսակետ

Հայրենիք-Սփիւռք.

անկախութիւն եւ ինքնաճանաչում 13

Սոցիալ-տնտեսական

Հայաստանը մարդկային

զարգացման համակարգում 18

ՀՀ Ազգային ժողով

Հայաստանի Հանրապետության

հողային օրենսգրքում փոփոխություն

և լրացում կատարելու մասին ՀՅԴ օրինագիծ 28

Պատմագիտական

ՀՅԴ – ՌԿ(բ)Կ Ռիգայի

1921 թ. բանակցությունների հարցի շուրջ 31

Պատմական

Մի աղբյուր Վանա իշխանի

և Արամ Մանուկյանի մասին 38

Հիշատակ

Խօսք Սարգիս Զէյթլեանի յիշատակին 44

«Դրօշակ»-ը 100 տարի առաջ

Պարլամենտական ընտրութիւնները Ֆրանսիայում 45

Նոր գրքեր

1946-1948 թ.թ. հայրենադարձությունը եւ նրա

դասերը. հայրենադարձության հիմնախնդիրն այսօր 46

Պատկերասրահ

Ռաֆայել Մելիքյան 48

"Դրօշակ"
ամենամսյա պաշտոնաթերթ
Հայ Հեղափոխական Դաշնակցության

Հիմնադիր՝ **ՀՅԴ**

Գլխավոր խմբագիր՝
Ռուբեն Հովսեփյան

Խմբագիր՝ **Կ. Խանլարյան**
Համակարգչային շարվածքը՝
Ս. Խաչատրյանի
Ձեւավորումը՝ **Ա. Գրիգորյանի**

Ոճը՝ **Ս. Փարթամյանի**

Գրանցման վկայական 897

Երեւան,375010,Մհեր Մկրտչյան 12/ 1
Հեռ. 521 876
էլ.փոստ.droshak@ arf.am

Տպագրությունը՝ «Բավիղ» ՍՊԸ-ի

"Droshak" monthly,
ARF dashnaktsoutiun publication

Editor-in-Chief: **Rouben Hovsepian**

12| 1 Mher Mkrtchian,Yerevan,375010
Tel. 521 876
e.mail:droshak@arf.am

Հ.Յ.Դ. ԲԻՒՐՈՅԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
A.R.F. BURO
LIBRARY

Digitized by ARF PR Office

Քաղաքական զարգացումներ

ՀՅԴ Հայ դատի յանձնախմբերի ահռելի աշխատանքի շնորհիւ, ԱՄՆ-ի Կոնգրեսի արտաքին յարաբերութիւնների յանձնաժողովում Հայոց ցեղասպանութեան վերաբերեալ 252 բանաձեւը քննարկուեց ու ընդունուեց, ինչը, ակնյայտօրէն, չէր համընկնում ԱՄՆ վարչակազմի քաղաքական ցանկութիւններին: Յանձնաժողովում տեղի ունեցած քննարկումները բացայայտեցին մի կարեւոր հանգամանք. նոյնիսկ դէմ քուէարկող պատգամաւորները կասկածի տակ չդրեցին Ցեղասպանության իրողութեան փաստը: Բանաձեւին դէմ հանդէս եկողները իրենց դիրքորոշումը, հիմնականում, պատճառաբանում էին հայ-թուրքական արձանագրութիւնների առկայութեամբ: Անցեալներում Հայոց ցեղասպանութեան ճանաչման բանաձեւերին կողմ քուէարկած եւ հայկական հարցի կողմնակից կոնգրեսական Մաք Քոլը կառչած մնաց հենց այդ պատճառաբանութեանը, ինչը եւ սպասելի էր: Արձանագրութիւններում «պատմական հարթութեան» յանձնաժողովի մասին նշուած կէտը դեռ երկար ժամանակ կանխարգելիչ ազդակ կը հանդիսանայ Հայոց Ցեղասպանութեան միջազգային ճանաչման գործում: Այդ մասին մենք բազմիցս զգուշացրել ենք…

Հայ-թուրքական յարաբերութիւնների ներկա կուրսը հետաքրքիր ընթացքի մէջ է յայտնուել: Ակնյայտ է, որ Թուրքիան պատրուակներ է փորձում գտնել վաւերացման գործը մինչեւ ապրիլի աւարտը ձգձգելու համար: Նախ՝ պատրուակ ծառայեցուեց ՀՀ Սահմանադրական դատարանի վճիռը: Սակայն շատ արագ թուրքերին յուշեցին, որ դա Հայաստանի ներքին գործն է եւ, ուրեմն, չի կարող պատրուակ դառնալ: Ապա՝ յայտնուեց ԱՄՆ կոնգրեսի 252 բանաձեւը: Այս կա-

պակցութեամբ թուրքերը մեծ աղմուկ բարձրացրեցին եւ հերթական անգամ փորձեցին աշխարհին ասել, որ հայկական սփիւռքի լոբբիստական շրջանակները, ամերիկեան որոշ քաղաքական շրջանակների համագործակցութեամբ, ցանկանում են ձախողեցնել վաւերացման գործընթացը: Ի հարկէ չվաւերացնելու այս պատրուակը նոյնպէս չդիմացաւ տրամաբանութեանը:

Թուրքիան դիմեց նախաձեռնողական մարտավարութեան եւ վարչապետի բերանով սպառնալիքներ կարդաց՝ հարիւր հազար ՀՀ քաղաքացիներին Թուրքիայից արտաքսելու կապակցութեամբ: Առաջին հայացքից թւում է, թէ վարչապետ Էրդողանի այս յայտարարութիւնը ցեղասպան պետութեան աւանդական, անքաղաքավարի ոճով բաց թողած դիւանագիտական կոպիտ սայթաքում էր՝ վիճակագրական բացայայտ սխալներով համեմուած: Սակայն, կարծում ենք՝ արծարծուածը բաւականին մտածուած մարտավարութիւն է: Վերջին ժամանակահատուածում, յատկապէս 252 բանաձեւի հետ կապուած, ՀՀ դիւանագիտական պահուածքը այնպիսին է, որ թոյլ է տալիս կարծելու, թէ Հայաստանը չի պատրաստում կրել սփիւռքի կատարած լոբբիստական գործունէութեան պատասխանատուութիւնը: Թուրքերը անմիջապէս նկատեցին, որ սփիւռքին հարուածելով, չեն յաջողեցնում սառնութիւն հաղորդել հայ-թուրքական յարաբերութիւններին: Հետեւաբար թուրքերը այս անգամ որպէս թիրախ ճշտեցին հենց Հայաստանի քաղաքացիներին, ակընկալելով, որ այդպիսի կոպիտ յայտարարութիւն ի վերջոյ հայկական կողմի բուռն հակազդեցութեան կարժանայ, ինչը, սառեցնելով յարաբերութիւնների գործընթացը, որոշ հնարաւորութիւն կը ստեղծի արձանագրութիւնների վաւերացումը հետաձգելու: Այս դէպքում, միջազգային կարծիքի հակազդեցութիւնը մեծ եղաւ եւ ստիպեց Թուրքիային, Շիրինօղլուի օգնութեամբ, մի կերպ սրբագրել «սայթաքում»-ը: Պատրուակներ փնտրելու եւ յօրինելու թուրքական խաղը, ըստ ամենայնի, կը շարունակուի դեռ ու կ՚ունենայ նորանոր դրսեւորումներ:

Հայ-թուրքական յարաբերութիւնների կուրսի ներկա ընթացքին ի տես, շարունակւում է մտահոգիչ մնալ ՀՀ արտաքին քաղաքականութեան չափազանց մեղմ եւ պասիւ վարքագիծը: Ինքն իրեն «նախաձեռնող» հռչակած ՀՀ դիւանագիտութիւնը այժմ, կարծես, ինքն իրեն ամբողջապէս անզօր է տեսնում իրերի դրութեան վրայ ազդելու իմաստով: Գոնէ հիմա, երբ թուրքական կողմը, աստիճանաբար, ընդարձակում է նախապայմաններով խօսելու իր բառապաշարը արցախեան հարցի հետ կապուած, հայկական դիւանագիտութիւնը պէտք է հանդէս գայ էլ աւելի պահաջատէր եւ էլ աւելի նախաձեռնողական դիրքերից: Արդէն իսկ «առանց նախապայմանների» հնամաշ կրկներգը, ձանձրոյթից բացի, այլ ձեռքբերում չի ապահովում հայ-թուրքական յարաբերութիւնների նախապայմաններով հագեցած դիւանագիտական տիրոյթում: Իսկ ո՞ւր են հայկական նախապայմանները:

Այն դէպքում, երբ Հիլարի Քլինթոնը բացորոշ կերպով յայտարարում է, թէ. *«Ես ներկայ եմ եղել Ցիւրիխում Հայաստանի եւ Թուրքիայի արտգործնախարարների միջեւ յարաբերութիւնների կարգաւորմանն ուղղուած մի շարք համաձայնագրերի ստորագրմանը, որոնցից մէկն էլ այդ երկրների կողմից պատմական յանձնաժողովի ստեղծումն է, որը կը զբաղուի անցեալի հետ կապուած խնդիրներով»*, ապա ի՞նչ դերասանութիւն է մեր կողմից՝ պնդել այն մասին, որ արձանագրութիւններում չկան նախապայմաններ:

Այս երկիմաստ կուրսի շարունակութիւնը, մեղմ ասած, այլեւս անիմաստ է:

Քաղաքական կամք է հարկաւոր ձախողուած կուրսը փոխելու եւ սրբագրելու համար:

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆՆ Է ԱՅՍ ՀԱՅՐԵՆԻՔԸ

«Դրօշակի» հարցերին պատասխանում է ՀՀ Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը

- Մինչև ՀՀ Սփյուռքի նախարարության ստեղծումը, խնդրի քննարկման շրջանում, կարծես գերակշռում էր այն կարծիքը, թե բոլոր այն գործառույթները, որ պիտի իրականացնի այս կառույցը, կարող են իրականացնել նաև արդեն գործող, կայացած կառույցները: Այս մոտեցման կողմնակիցները, Սփյուռքի հետ համագործակցությունը կազմակերպելու համար, բավարար էին համարում գրեթե բոլոր նախարարություններում Սփյուռքի բաժիններ ստեղծելու ճանապարհը: Թերևս այսօր էլ նման մոտեցումները նկատելի են: Ահա այս իրողությունը՝ կազմակերպական և հոգեբանական իր կողմերով, ինչպե՞ս է հաղթահարում Ձեր նախարարությունն ամենօրյա շփումներում:

- Հարցը ես կբաժանեի երկու մասի ու կշեշտեի, որ Սփյուռքի հետ Հայաստանի անկախացումից հետո համագործակցող պետական մարմինների կամ պետական կառույցներում բաժինների ստեղծման բավարար լինելու մասին կարծիքը, այո, գերակշռում էր Հայաստանում: Որովհետև պետական կառույցից որևէ գործառույթ վերցնել ու վերանպատակել մեկ ուրիշ կառույցի, իհարկե, ցավոտ գործընթաց է, քանզի բոլորն էլ ձգտում են առավել շատ գործառույթներ ունենալ իրենց իրավասության ներքո: Սակայն խնդիրն ավելի շատ ուղղորդվում ու առաջադրվում էր Սփյուռքի կողմից, այնտեղ կարծիքն այլ էր: 1999, 2002 և 2006 թթ. կազմակերպված «Հայրենիք-Սփյուռք» երեք համաժողովների մասնակիցների ճնշող մեծամասնությունը պահանջում էր ստեղծել առանձին կառույց, նախարարություն:

Ընդհանրապես նախարարությունը, որպես պետական մարմին, ստեղծվում է պետության ներսում որոշակի գործառույթ իրականացնելու, այդ ոլորտը կառավարելու և հայապահպան քաղաքականություն մշակելու համար: Մեր ազգի երկու երրորդը գտնվում է հայրենիքից դուրս և այդ ռեսուրսի հետ պետական մարմնի կողմից կազմակերպված ձևով աշխատելը, կարծում եմ, ոչ թե քննարկման նյութ էր, այլ քսան տարի ուշացած որոշում: Եվ միայն հանրապետության նախագահը, կարող եմ ասել, համարձակ քայլ արեց, ստեղծելով այս նախարարությունը, ընդ որում գործադիր իշխանության մակարդակով: Գիտակցելով Սփյուռքի հետ կապերի ամրացման ու մեծացման անհրաժեշտությունը, նախագահը մեր առջև դրեց երեք ռազմավարական խնդիր. առաջինը՝ հայապահպանությունը, որի համար Սփյուռքը տարիներ շարունակ պայքարել է, ստեղծել է հազարավոր կազմակերպություններ և որի նպատակն այն է, որ օտար ափերում հայը մնա հայ՝ հավատարիմ իր ինքնությանը, իսկ նորաստեղծ նախարարությունն իր հերթին կոչված է կարգավորել այդ կազմակերպությունների հետ աշխատելու ձևերը, ուղղությունները, որպեսզի հայապահպանության ֆենոմենն ավելի հզորանա: Հայապահպանության հիմքը կրթությունն է, լեզուն, մյուսը՝ հայ մշակույթը, երրորդը՝ հայ ընտանիքը, և չորրորդը՝ մեր քրիստոնեական հավատքը: Հետևաբար այս չորս սյուների վրա է, որ կառուցվում է հայապահպանության հզոր շենքը: Եվ այստեղ նախարարության անելիքներն անսպառ են, որովհետև 7 մլն. մարդ ապրում է հայրենիքից դուրս, և եթե դու գործ ունես նույնիսկ մեկ հայի հետ, պարտավոր ես նրա հետ աշխատել:

Երկրորդ ռազմավարական խնդիրը հայ ներուժի հայտնաբերումն ու օգտագործումն էր հայրենիքի հզորացման, ուժեղացման համար: Այդ նպատակին հասնելու կարևորագույն գրավականը համահայկա-

կան մասնագիտական համաժողովների գումարումն է: Եվ փաստորեն նախարարության ստեղծմանը զուգահեռ կազմակերպեցինք երեք համաժողով Հայաստանում, մեկին էլ օժանդակեցինք Նյու Յորքում: Դրանք էին՝ ճարտարապետների համաժողովը, իրավաբանների համաժողովը, սրտաբանների համաժողովը և Նյու Յորքում՝ բժիշկների համաժողովը: Որովհետև եթե դու ուզում ես ներուժ հայտնաբերել, այդ ներուժն օգտագործել, և որպեսզի կայանա Հայաստան-Սփյուռք մասնագիտական փոխհարստացումը, դու պիտի խթանես մասնագիտորեն: Համաժողովների հիմքի վրա սփյուռքահայ մասնագետները կարող են Հայաստանի համար որոշակի մասնագիտական ծրագրեր մշակել, քանի դեռ Հայաստանի կրթական համակարգը չի հասել այն հզորության, որ կարողանա բոլոր մասնագիտություններն այստեղ պատրաստել, իսկ մենք, աշխարհի տարբեր մասերում, տարբեր ոլորտների հայ մասնագետներ ունենք, և ուրեմն, ինչո՞ւ նրանց ուժը չօգտագործենք մեր խնդիրներն առաջ տանելու համար, շատ անգամ առանց գումար ծախսելու: Այսօր արդեն կա նաև համահայկական ցանց, որը կոճակի մեկ հպումով հնարավորություն է տալիս բոլոր մասնագետներին հաղորդակցվելու: Մենք նրանց առջև հարցեր ենք դնում, քննարկումներ ենք կազմակերպում, ինչի շնորհիվ հնարավոր է դարձել կապը մշտապես սերտ պահել և ոչ թե համաժողովից համաժողով հիշել մեկմեկու գոյության մասին:

Եվ, վերջապես, երրորդ ռազմավարական խնդիրը, որը դրվեց նախարարության առաջ, հայրենադարձությանը նպաստող ծրագրերի մշակումն էր, ինչի առումով, ի դեպ, էլի գտնվեցին չարախնդացողներ, որոնք համարում են, թե քանի դեռ Հայաստանը տընտեսապես զարգացած չէ, քանի դեռ մնում է ռիսկի գոտում, ի՞նչ հայրենադարձական ծրագրերի մասին է խոսքը: Ես ուզում եմ ասել իմ ընդդիմախոսներին, որ եթե նույնիսկ մեկ, երկու կամ տասը հոգի տարվա մեջ հայրենադարձվում են, ուրեմն նրանց կյանքին ու գործունեությանը օժանդակելու համար պետք է կանոնակարգել այնպես, որ մարդիկ կարողանան իրենց խընդիրները հայրենիքում հանգիստ լուծել: Սփյուռքի նախարարության ստեղծումը չէ՞ որ նաև բարոյական մեծ խթան էր սփյուռքահայության համար, և ոչ թե այն պատճառով, որ սա նրանց կառավարելու լծակ է, այլ որովհետև հիմա արդեն կա մի մարմին, որն ընդունակ է բազմակողմանի համագործակցության:

Ինչ վերաբերում է Սփյուռքի բաժիններին մյուս նախարարություններում, ապա, իհարկե, դրանք անհրաժեշտ են: Մենք չենք եկել փոխարինելու կառավարությանը, հակառակ դեպքում կկոչվեինք մինիկառավարություն, եթե զբաղվեինք կրթության, մշակույթի կամ երիտասարդության բովանդակային հարցերով նաև: Դրա համար կան մասնագիտական նախարարություններ, որոնք պարտավոր են վարել այնպիսի քաղաքականություն, որը կազդի նաև Սփյուռքում տվյալ ոլորտների վրա: Երբ մենք մշակեցինք Հայաստան-Սփյուռք հայեցակարգը, մենք չանվանեցինք այն «Սփյուռքի նախարարության հայեցակարգ»: Դա Հայաստանի և Սփյուռքի միջև բոլոր փոխհարաբերությունների արտացոլումն է, որը կապված է ողջ կառավարության աշխատանքի հետ: Իսկ Սփյուռքի նախարարությանն իր կանոնադրությամբ և Նախագահի հանձնարարությամբ տրված է համակարգող նախարարության կարգավիճակ: Դա է պատճառը, որ մենք կատարում ենք բոլոր մարմինների տարվա հաշվետվության ամփոփումը և ներկայացնում ենք կառավարությանը՝ Սփյուռքի հետ բոլոր նախարարությունների, բոլոր գերատեսչությունների, բոլոր մարզպետարանների և նույնիսկ տեղական կառավարման մարմինների աշխատանքների արդյունքները: Այդ բոլոր կառույցների գոյությունը խիստ անհրաժեշտ է, բայց դրանք համակարգման կարիք ունեն: Իհարկե, որոշակի լարվածություն առկա է, գերատեսչական շահերի բախում երբեմն լինում է, բայց, ես կասեի, դա շատ անգամ անհատականացված բնույթ է կրում, որովհետև կան նախարարներ, ում հետ որևէ խնդիր չի ծագում, միասին հանգիստ աշխատում ենք, քաջ գիտակցելով, որ բոլորս, ի վերջո, մեկ թիմ ենք և հետապնդում ենք ընդհանուր շահեր:

- Սփյուռքը բազմադեմ ու բազմաշերտ գոյացում է և ոչ թե շոշափելի, միավորված կառույց, որի հետ կարելի է հարաբերվել այնպես, ինչպես, ասենք, պետությունը պետության, այլապեսակ կազմակերպությունները՝ այլապեսակ կազմակերպությունների հետ: Փաստորեն, Դուք ունեք ևս մի կազմակերպական ու հոգեբանական խնդիր: Ի՞նչ մոտեցումով է նախարարությունը հարաբերվում բազմադեմ և բազմաշերտ հայկական Սփյուռքի հետ:

- Հարցը շատ հոգեհարազատ է և այս մեկ տարվա ընթացքում այդ գնահատականն առավել ցցուն դարձավ: Ասեմ, որ շատերը, հատկապես Հայաստանում,

հենց այդ տպավորությունն ունեն, թե Սփյուռքը միասնական մարմին է, որի հետ մենք, իբրև Հայաստանի նույնատիպ կառույց, հարաբերվում ենք: Ցավոք, դա այդպես չէ, եթե այդպես լիներ, մեր գործը շատ կհեշտանար: Այսօր մենք հաշվում ենք 33000 սփյուռքյան կազմակերպություն, և եթե փորձենք այս բոլորի հետ կարգավորել մեր աշխատանքը, երևի տասը տարի կանցնի: Դրան ավելացրեք նաև, որ յուրաքանչյուր կազմակերպություն ունի իր առանձնահատկությունները: Յուրաքանչյուր տարածաշրջան ունի իր առանձնահատկությունները. երբեք չի կարելի համեմատել, ենթադրենք, Մերձավոր Արևելքի խնդիրները Եվրոպայի համայնքի կամ ԱՊՀ-ի տարածաշրջանի խնդիրների հետ, դրանք խիստ տարբեր են:

Այս անվիճելի իրողությունը ստիպել է մեզ որդեգրել մի քանի սկզբունք, որոնցով առաջնորդվում ենք: Առաջինը՝ միմյանց ճանաչել, վստահել և գործակցել: Եթե դու չես ճանաչում, դու ախտորոշել չես կարող, հետևաբար չես էլ կարող գործակցել: Երկրորդը՝ չմիջամտել, չկառավարել, այլ օժանդակել, որից հետո կրկին գործակցել: Մենք ոչ կարող ենք, ոչ էլ իրավունք ունենք միջամտելու սփյուռքյան կազմակերպությունների գործունեությանը, առավել ևս՝ ճնշելու. նրանք ինքնուրույն կառույցներ են, ապրում ու գործում են տարբեր մշակույթների ներքո և բնականաբար, շատ ավելի լավ գիտեն իրենց հնարավորություններն ու բարդությունները: Մենք կարող ենք միայն փորձել համագործակցության եզրեր գտնել: Ասեմ ավելին. մենք գտնում ենք, որ քանի որ Հայաստանն իրենցն էլ է, Հայաստանի կառավարությունն իրենց կառավարությունն էլ է, մենք միշտ ուշադիր ենք իրենց կողմից արված միջամտություններին ու համարում ենք, որ Սփյուռքի նկատողություններն ու խորհուրդները հիմնականում պետք է հաշվի առնել: Այդ առումով նախարարությունում մենք ըմբռնումով ենք վերաբերվում, քանզի հայ մարդը եթե առաջարկություններ է անում ու խորհուրդներ է տալիս, նա մտածում է հայրենիքի շահի մասին, և յուրաքանչյուր ազդակ մեզ համար նշանակություն պետք է ունենա:

Սփյուռքն իրոք շատ տարբեր է, ծայրահեղություններով լի: Ունենք և աղքատներ, և մեծահարուստներ, և կուսակցականացված հատված, և չեզոք հատված, և հայրենիքի մասին երազողներ ու կյանքը տալու պատրաստակամներ, և, ցավոք, բացարձակապես անտարբերներ... Եվ մենք պարտավոր ենք բոլորի հետ առանձին-առանձին, շերտ-շերտ աշխատել: Ինձ համար նշանակություն չունի՝ մեծ է համայնքը թե փոքր, կարևոր է, որ այնտեղ հայեր են, հետևաբար յուրաքանչյուր հայի հետ պետք է համագործակցելու ձևը գտնել: Ես հաճախ եմ լսում, որ գոնե մեզ քննադատողների հետ շփվելը պարտադիր չէ: Անընդունելի է մեզ համար այդ կարծիքը, հակառակը՝ միշտ ասել եմ՝ մենք ունենք յոթ միլիոն դեսպան, որոնք աշխարհի տարբեր երկրներում ներկայացնում են ազգս, երկիրս, պայքարում են Հայաստանի իմիջի բարձրացման համար, հայ ժողովրդի իրավունքների համար, և միևնույն ժամանակ ունենք յոթ միլիոն քննադատ, որոնց մեջ կան անողոքներ ու հաշվի չեն առնում, որ մենք հենց նոր ենք ստեղծվել, չեն համբերում, որ մի քիչ կայանանք, ուժեղանանք, այլ՝ բառն անգամ չարտասանած՝ անմիջապես «մուրճով» հարվածում են: Սա, կարծում եմ, մարդկանց զարգացածության մակարդակից է կախված ու եթե մենք յուրաքանչյուր քննադատությունից հետո թևաթափ լինենք, պարզապես չենք կարող աշխատել: Ուրիշ բան է, որ մյուս նախարարությունների համեմատ մերն ունի լրացուցիչ դժվարություն. եթե նրանք ունեն հսկայական համակարգ, հստակեցված են գործառույթներն ու գործունեությունն առաջնորդվում է օրենսդրությամբ, նախարարի հրամաններով, ապա Սփյուռքի նախարարը չի կարող այնպիսի հրաման արձակել, որը սփյուռքահայերի համար պարտադիր լինի: Հետևաբար հրաման տալուց, ծրագիր մշակելուց առաջ մենք սկսում ենք հարյուրավոր կազմակերպությունների հետ բանակցել, որովհետև միայն առաջարկելով, առանց պահանջարկը հաշվի առնելու, մենք չենք կարող իրականացնել և ոչ մի ծրագիր: Իսկ բանակցությունների դրական արդյունքը թե ժամանակ է պահանջում, թե ուժ ու եռանդ, թե համադրելու կարողություն, թե հոգեբանության փոխընկալում... Եվ էական ֆինանսական ծախսեր, որ ամբողջովին հոգում է մեր պետությունը: Չիմացողներին ասեմ, որ նախարարության ֆինանսական խնդիրները հոգում է պետական բյուջեն: Մենք չունենք ուրիշ հովանավորներ և չենք էլ խնդրում, որ մեզ որևէ մեկն օգնի, մանավանդ որ մեր ծրագրերի ծավալը հնարավոր չէ կանխատեսել. դու կարող ես սկսել փոքր մի ծրագիր, որը մեկ էլ տեսնում ես մեծ մասշտաբի է հասնում (Սփյուռքի ակտիվությունից կախված) և, ուրեմն, նախօրոք բիզնես-պլան մշակելը գրեթե անհնար է: Իհարկե, եթե որևէ կազմակերպություն մասնակցելու կամ աջակցելու պատրաստակամություն է ցուցաբերում, մենք միշտ ուրախ

ենք համագործակցել:

- Նման նախարարություն ստեղծելով, բնական է, որ նկատելիորեն փոփոխություն պիտի կրեր Հայաստանի օրենսդրությունը: Ի՞նչ փոփոխություններ են արդեն կատարվել և ի՞նչ փոփոխություններ են սպասվում մոտ ապագայում:

- Սփյուռքի նկատմամբ պետական քաղաքականությունը ներառում է գաղափարական, մշակութային, կրթական, դիվանագիտական, տնտեսական, կազմակերպչական հարցերի ամբողջությունը: Դրանք իրականացվում են ըստ ուղղությունների՝ հենվելով Հայեցակարգի, ծրագրերի, օրենքների, որոշումների և ձեռնարկների վրա: Ինչպես գիտեք, անցյալ տարվա օգոստոսին ՀՀ կառավարությունն ընդունեց Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման հայեցակարգը: Ուզում եմ ընդգծել, որ այն սահմանում է ո՛չ միայն Սփյուռքի նախարարության անելիքների շրջանակը, այլև Սփյուռքի նկատմամբ որոշակի քաղաքականություն վարող պետական կառավարման բոլոր մարմինների գործունեության եղանակները: Հայեցակարգը կյանքի կոչելու համար պատասխանատու է կառավարությունն իր բոլոր նախարարություններով. յուրաքանչյուր կառույց պետք է ունենա իր ծրագրերը և դրանք իրականացնի Սփյուռքի հետ: Չեմ հոգնում կրկնելուց, որ ՀՀ Սփյուռքի նախարարությունը չի ստեղծվել Սփյուռքը կառավարելու համար: Այն, լինելով ՀՀ կառավարության մաս, բոլոր միջոցներով աշխատում է սփյուռքահայերի համար Հայաստանի Հանրապետությունում ստեղծել պայմաններ՝ աշխատանքային, կրթական, մշակութային խնդիրները լուծելու, ներդրումներ կատարելու, երկքաղաքացիություն ձեռք բերելու և առկա այլ խնդիրներին օժանդակելու համար:

Իմ ամենամեծ ցանկությունն է, որ յուրաքանչյուր հայ մարդ իր հայրենիք մտնի ազատ, առանց վիզայի, առանց գումար վճարելու: Ուստի մեր նախարարությունը առաջարկություն ներկայացրեց փոփոխություն կատարել «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում, որի արդյունքում Հայաստան ժամանողն արդեն իսկ 21 օրվա համար վճարում է ոչ թե 15.000 դրամ, այլ՝ 3000 դրամ: 2009 թվականի ապրիլի 1-ից օրենքը գործում է նշված փոփոխությամբ: Իսկ ինչ վերաբերում է հայրենիքում մնալու ժամանակահատվածին, ապա, գործող կարգի համաձայն, քաղաքացին Հայաստանում կարող է մնալ մինչև 21, 120 և ավելի օրեր՝ վեց ամսից մինչև մեկ տարի ժամկետով: Վերոնշյալ օրենքում հայրենիքում 120 օր անցկացնելու թույլտվության համար սահմանված էր 105 հազար դրամ: Քննարկումների արդյունքում հասանք նրան, որ այսօր, մեկ տարվա ընթացքում մինչև 120 օր հայրենիքում գտնվելու դեպքում, մարդը վճարելու է միայն 40 հազար դրամ, իսկ վեց ամսվա ընթացքում 60 օր անցկացնելու դեպքում՝ 20 հազար դրամ: Սա վկայում է, որ մենք սկզբունքորեն փորձում ենք հնարավորինս մատչելի դարձնել հայրենիք գալն ու մնալը:

Վերջերս դարձյալ մեր նախաձեռնությամբ փոփոխություն մտցվեց «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքում: Ցավալի է այն փաստը, որ մեր շատ հայրենակիցներ հայրենիքում համարվում են օտարերկրացիներ, քանի որ նրանք դեռևս ձեռք չեն բերել երկքաղաքացիություն: Այս իսկ պատճառով օտարերկրացի եզրույթն այսօր գործածության մեջ է նաև մեծ թվով հայերի համար: Մենք ուսումնասիրեցինք օրենքը և պարզվեց, որ Հայաստանում երկարաժամկետ մնալու երեք կարգի հնարավորություն կա՝ ժամանակավոր կացություն՝ նշանակում է մեկ տարի, մշտական կացություն՝ ներառում է մինչև հինգ տարի ժամանակահատված, և կացության հատուկ կարգավիճակ, որը տասը տարվա հատուկ կարգավիճակի անձնագիրն է: Ուսումնասիրության արդյունքում պարզվեց նաև, որ այդ իրավունքից կարող է օգտվել ցանկացած օտարերկրացի, իսկ ազգությամբ հայն իր ծագումով, բացի կացության հատուկ անձնագրից, մնացած դեպքերում որևէ արտոնություն չուներ: Անհրաժեշտ էր շրջանցել այս բացթողումն օրենքում, պետք էր խստագույնս ընդգծվեր ազգությամբ հայի առավելությունը, քանի որ յուրաքանչյուր օտարերկրացու իրավունքն է՝ երբ գա և երբ հեռանա Հայաստանից, իսկ մենք կարևորում ենք հայի մուտքը Հայաստան և փորձում ենք հայրենիքում բարենպաստ պայմաններ ստեղծել նրա համար: Առաջարկեցինք օրենքում փոփոխություն մտցնել, որպեսզի սահմանված ձևով, որևէ փաստաթղթով փաստվող ազգությամբ հայը կարողանա հայրենիքում ապրել և ազատ ելումուտ անել և մշտական (5 տարի), և ժամանակավոր (մեկ տարի) կարգավիճակ ստանալով: Սրանով մենք նաև ինչ-որ չափով նպաստում ենք հայրենադարձությանը: Եթե հայը կարող է գալ և 1-ից 5 տարի ապրել հայրենիքում, կարող է ազատ մուտք գործել և դուրս գնալ Հայաստանից, ուրեմն նա հնարավորություն է ստանում

լիովին ուսումնասիրել և ճանաչել հայրենիքը և՛ դրական, և՛ բացասական կողմերով, և, ինչու չէ, տեսնել նույնիսկ այն, ինչը մեզ չի հաջողվել նկատել, հասկանալ թերությունները, բացերը: Չէ որ նրանցից շատերը ընդամենը տասը կամ քսան օր ապրելով հայրենիքում, կարող են հրապուրվել միայն նրա երազային, հաճելի կողմերով՝ չընկալելով խորքայինը, ինչը, հնարավոր է, հետագայում նրանց մոտ հիասթափություն առաջացնի: Օրենքներում կատարված փոփոխությունների կարևորությունն այն է, որ դրանք առնչվում են բոլոր սփյուռքահայերին և ոչ թե որոշակի խմբի կամ հատվածի:

Կամ, ասենք, սփյուռքահայ ուսանողների համար առավել նպաստավոր պայմաններ ստեղծելու հարցը: Օրինակ, «Կրթության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարվեց, և ջավախահայ ուսանողների ուսման վարձը հավասարվեց ՀՀ քաղաքացիներին: Սակայն ինձ համար բոլոր սփյուռքահայ ուսանողները հավասար են, ուստի մենք ՀՀ կառավարության առաջ հարց բարձրացրեցինք՝ փորձել օրենքը տարածել Սփյուռքի մեր բոլոր հայրենակիցների վրա: Ի ուրախություն՝ մեր առաջարկին արձագանքեցին մի շարք համալսարանների ռեկտորներ: Նրանցից առաջինը ճարտարապետաշինարարական համալսարանի ռեկտոր պրն. Հ. Թոքմաջյանն էր, ով գիտական խորհրդում բարձրացրեց հարցը և սփյուռքահայ ուսանողների ուսման վարձավճարը հավասարեցրեց Հայաստանի ուսանողների վարձավճարներին: Նրա օրինակին հետևեցին նաև ուրիշները՝ մանկավարժական, Բրյուսովի անվան, տնտեսագիտական, ագրարային, Գավառի և այլ համալսարաններ: Այսօր պետական բուհերի ճրնշող մեծամասնությունում ուսման վարձավճարը հայաստանցիների և սփյուռքահայերի համար հավասարեցված է: Ինչ վերաբերում է սփյուռքահայ ուսանողների բժշկական օգնության և սպասարկման խնդիրներին, ապա պետք է նշեմ, որ հարցը բարձրացրեցինք Հանրապետության Նախագահի առջև և նրա հանձնարարությամբ այսօր, ՀՀ առողջապահության նախարարի հրամանով, այդ խնդիրները ևս սփյուռ-

Համազգային հայ կրթական և մշակութային միության կենտրոնական վարչության անդամները ՀՀ Սփյուռքի նախարարությունում

քահայ և հայաստանցի ուսանողների համար նույնպես հավասարեցված են:

Սփյուռքահայերին շատ հետաքրքրում են մաքսային խնդիրները: Մաքսային օրենքները շատ կարևոր են մեզ համար, քանի որ այսօր արդեն գալիս են մարդիկ, որոնք մշտապես ուզում են ապրել Հայաստանում: Այսօր մենք մշակում ենք հայրենադարձության հայեցակարգ և օրենք, անկախ նրանից, թե քանի սփյուռքահայ կվերադառնա՝ ապրելու հայրենիքում: Մարդը կամավոր է հայրենիք վերադառնում, հայրենադարձվում: Սակայն հայրենադարձվողներն ունեն տասնյակ հիմնախնդիրներ, որոնց լուծումը պետության գործն է: Այդ առումով, սկսած մաքսային խնդիրներից, վերջացրած լեզվական ինտեգրման հարցերով, մենք պարտավոր ենք քննարկել, ուսումնասիրել և հեշտացնել: Պատահական չէ, որ մեր նախարարություն են դիմում տասնյակ սփյուռքահայեր, բողոքում երկրի մաքսային կանոններից, որոնք թույլ չէին տալիս անգամ, որ մարդը կարողանա իր օգտագործած իրերը հայրենիք տեղափոխել: Այս ամենի հիմքով մենք հանդես եկանք առաջարկությամբ, փորձեցինք որքան հնարավոր է բարենպաստ պայմաններ ստեղծել, որպեսզի մարդիկ կարողանան իրենց կահկարասին, ավտոմեքենան, օգտագործած իրերը տեղափոխել հայրենիք: Այսօր բավական հեշտացվել է նաև այս խնդիրը:

Ինչ վերաբերում երկքաղաքացիության օրենքի ընդունմանը, ապա այն որքան ուրախացրեց սփյուռքահային, նույնքան էլ դժգոհության ալիք բարձրացրեց: 2008 թվականի ապրիլին, սահմանադրական բարեփոխումներից հետո, երբ ընդունվեցին քաղաքացիության մասին օրենքում փոփոխությունները, մեր երկրում ներդրվեց երկքաղաքացիության ինստիտուտը: Մշակվեցին մարդու անվան, հաշվառման, զինակոչման հետ կապված խնդիրները, կառուցակարգերը: Ժամանակը ցույց տվեց, որ դրանք, փաստորեն, բավական անմշակ էին, թափանցիկ, մատչելի չէին: Ցավով եմ նշում, որ այդքան սպասված օրենքի ընդունումը, բազմաթիվ սփյուռքահայերի մեջ հիասթափություն առաջացրեց՝ անկատարության, անհարկի բարդություններ առաջացնելու պատճառով: Բարդություններից մեկն, օրինակ, ինչը պետք է հատուկ ընդգծել և առանձնացնել, այն է, որ անգլերենից կատարելով անվան և ազգանվան տառադարձությունը՝ առաջանում էր խեղված պատկեր, և անունը, ազգանունը, որով հայ մարդուն կոչել են երեսուն, հիսուն տարի, հանկարծ, հայկական անձնագրում աղավաղվում է և ստանում մի ձև, որը տվյալ մարդու անվան հետ որևէ առնչություն չունի: Սա մեծ ալեկոծություն բարձրացրեց Սփյուռքում, եղան նաև սփյուռքահայեր, ովքեր հրաժարվեցին հայկական անձնագրից: Երկքաղաքացիության ընդունումից հետո՝ հինգ ամիս անց միայն ստեղծվեց Սփյուռքի նախարարությունը: Եվ մենք հասկացանք, որ մեր առաջին գործերից մեկը պետք է լինի այս հարցի քննարկումը և լուծումներ գտնելը: Բազմաթիվ քննարկումներից և դժվարություններից հետո, նախարարությունը հարց բարձրացրեց ՀՀ Նախագահի առջև և նրա հանձնարարությամբ կառավարությունն ընդունեց որոշում, ըստ որի մարդը ինքն է գրում իր հայերեն անուն ազգանունը և ինչպես որ գրել է, այնպես էլ այն պետք է արձանագրվի անձնագրում: Այս որոշումից հետո որևէ բարդություն այլևս չի առաջանում: Այսօր մենք հաճույքով կարող ենք ասել բոլոր սփյուռքահայերին, որ կարելի է երկքաղաքացիություն ձեռք բերել առանց տատանվելու:

Մյուս բարդությունն առնչվում էր հաշվառման խնդրին, քանի որ հայաստանյան անձնագիր ստացող քաղաքացին պետք է հաշվառված լինի Հայաստանի որևէ տարածքում, որևէ հասցեում: Այս պահանջը նույնպես բարդություններ էր առաջացնում, որովհետև անձնագիր ստանալու համար սփյուռքահայը ստիպված էր բարեկամ գտնել, խնդրել նրան, որպեսզի ստանար նրա թույլտվությունն իր հասցեում հաշվառվելու: Այս ամենի համար պահանջվում էր ժամանակ, նյարդային լարվածություն, անհանգստություն: Այս իսկ պատճառով նպատակահարմար գտանք փոփոխել «Պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքում քաղաքացիների հաշվառման մասին հոդվածը: Արդյունքում, այս օրենքում փոփոխություն կատարվեց և ՀՀ քաղաքացիություն ստացած յուրաքանչյուր օտարերկրացի այլևս հաշվառման համար փաստաթղթեր չպետք է ներկայացնի, այլ ՀՀ պետական ռեգիստրում կհաշվառվի այն պետության հասցեով, որտեղ ապրում է, այսինքն՝ որևէ նոր պարտականություն նրա վրա չենք դնում:

ՀՀ քաղաքացի դառնալու համար սահմանված է ժամկետ, ըստ որի ծանուցագիր ստանալուց հետո քաղաքացին, երեսուն օրվա ընթացքում, պետք է անպայման գա Հայաստան իր անձնագիրը ստանալու, որը ևս դժվարություն էր առաջացնում: Այս հարցերը նույնպես ուսումնասիրել ենք ոստիկանության և անձ-

նագրային և վիզաների վարչության հետ, որովհետև փաստաթղթերի ստեղծման և տրամադրման հիմնական կրողը կառավարությանը կից ՀՀ ոստիկանությունն է: Քաղաքական առումով նպատակահարմար համարվեց, որ ՀՀ քաղաքացիություն ստացողը գոնե մեկ անգամ պետք է գա հայրենիք անձնագիր ստանալու: Սակայն անձնագիր ստանալու համար սահմանված 30 օրը բավական կարճ ժամանակահատված է՝ հաշվի առնելով, որ անձը կարող է գործեր ունենալ, կարող է հիվանդ լինել, երկրում չլինել և այլն: Այս ամենը հաշվի առնելով էր, որ ՀՀ կառավարությունը որոշում ընդունեց և այս արգելքը նույնպես վերացվեց: Կա նաև կարծիք, որ 6 ամսից մինչև 1 տարի ժամանակահատվածում քաղաքացիություն շնորհելը երկար է: Նկատի ունենալով սփյուռքահայերի այս առաջարկը ևս, սահմանված կարգով ժամանակահատվածը կրճատվեց: Նույն որոշման համաձայն՝ կրճատվել է նաև քաղաքացիություն ստանալու համար ներկայացվող փաստաթղթերի ցանկը, ցանկից հանված են ինքնակենսագրության և աշխատանքային գործունեության վերաբերյալ ամփոփ տեղեկատվության պահանջները, իսկ դատվածության մասին տեղեկանքն անձը կարող է ներկայացնել իր քաղաքացիության երկրից:

Օգտվելով առիթից, ուզում եմ դիմել մեր սփյուռքահայերին. 10 միլիոն ժողովուրդ ունեցող ազգի իրավական կապը պետության հետ քաղաքացիությունն է, հետևաբար պետք է անել հնարավորը Հայաստան պետության քաղաքացի դառնալու համար: Վստահ եմ, որ ծոցագրպանում Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր կրելը յուրօրինակ հպարտություն, հաճույք է, և հայրենիքից հեռու ապրող հայ մարդու համար դա հայրենիքի մի մասնիկն է, մասունքը՝ իր գրպանում: Իսկ հայրենիքի այդ սուրբ մասունքը պետք է ունենա յուրաքանչյուր հայ, առավել ևս, որ շուտով լրանում է Հայոց ցեղասպանության հարյուրամյա տարելիցը և մենք աշխարհին ապացուցելու շատ բան ունենք՝ մեր միասնությամբ, մեր համախմբվածությամբ, ինչո՞ւ չէ, նաև մեր քաղաքացիների թվով, որպեսզի այս փոքր հողակտորը հայտարարի, որ ինքը ոչ թե երեք միլիոն քաղաքացիների երկիր է, այլ հինգ, յոթ... միլիոն քաղաքացիների: Սա շատ կարևոր է:

- Սփյուռքի հետ համագործակցության դաշտն այնքան լայն է, որ հաճախ կատարված աշխատանքները չեն էլ նկատվում: Ու թեև սկսված աշխատանքների արդյունքն է, ի վերջո, գնահատման արժանանալու, և ժամանակն է, ի վերջո, գնահատողը, սակայն ավելորդ չի լինի մի քանի խոսքով նշել, թե ինչ է արվել մինչև օրս:

- Եթե տարին ամփոփենք, ապա ամենագլխավոր արդյունքը կհանդիսանա Սփյուռքի նախարարության կայացումը: Մենք լիարժեք գործում ենք մյուս բոլոր պետական կառույցների հետ միասին: Եվ զուգահեռ՝ ոչ միայն մասնագետներ ընտրվեցին, ոչ միայն կանոնադրությունն ու իրավական բազան ստեղծվեցին, այլև բազմաթիվ ծրագրեր մշակվեցին:

Գլխավոր խնդիրը ստեղծման պահին սփյուռքագետների պակասն էր, և առաջինն, ինչ արեցինք, դիմեցինք Երևանի պետական համալսարան՝ «Սփյուռքագիտություն» մասնագիտություն բացելու խնդրանքով, ուր այսօր արդեն մեր պատվերով պատրաստվում են տասնմեկ մագիստրոսներ: Սա համարում եմ մեր լավագույն նվաճումը, որը պետք է զարգացնենք: Երկրորդ կարևոր խնդիրը, որ կարողացանք լուծել, Գիտությունների ազգային ակադեմիայի Արվեստի և Գրականության ինստիտուտներում սփյուռքագիտության բաժիններ բացելն ու նախարարության կողմից տրված գիտական պատվերները կատարելն էր: Գրականության ինստիտուտում մշակվեց հայ գրականության մեջ հայ ինքնության պահպանման հիմնախնդրին նվիրված գիրքը, Արվեստի ինստիտուտում՝ «Քաջազի մշտավառ կանթեղը» աշխատությունը, որը նվիրված է Քաջազի կյանքին ու գործունեությանը: Նաև Գիտության ազգային ակադեմիայի հետ միասին բացեցինք արտասահմանյան հայ ակադեմիկոսների բաժանմունք, որի յոթանասունութ անդամ ակադեմիկոսները հավաքվեցին տարեկան ժողովի: Նրանցից շատերը անվանի գիտնականներ են և պիտի փորձեն հիմնել իրենց դպրոցները Հայաստանում: Ակադեմիայի Արևելագիտության և Պատմության ինստիտուտների հետ պատրաստեցինք հայ համայնքների ներկա վիճակի մասին ուսումնասիրություններ: Շատ արդյունավետ աշխատեցինք «Նորավանք» կրթական հիմնադրամի հետ, տպագրվեցին «Հայությունն Իսրայելում», իսլամացած հայերի հիմնախնդիրների, ջավախահայության հիմնախնդիրների մասին աշխատություններ: Լուրջ նվաճումներից եմ համարում այն, որ գտնվեց արևմտահայերենի ու արևելահայերենի միջև վաղեմի տարաձայնությունների հարցի էլեկտ-

ռնային լուծումը: Գիտնականների մի խումբ մշակեց արևմտահայերենից արևելահայերեն և հակառակը փոխարկիչ, և սա նշանակում է, որ խորհրդային տարիներից մեզ հասած արժեքների ընկալման ոլորտում այլևս որևէ խնդիր չի առաջանա: Արևմտահայերենին սատարելու կարևոր ձև է հուլիսին կազմակերպվող համաժողովը, որը նվիրված է Սփյուռքում արևմտահայերենի ուսուցման վիճակին, որ ծագել է տարբեր աշխարհամասերում լեզվի մատուցման տարբեր ձևերի խնդրից: Գաղտնիք չէ, որ չկան միասնական դասագրքեր, բոլորը յուրովի են կազմվում, ինչը և ծնել է համահայկական դասագիրք ստեղծելու գաղափարը: Դրան վերաբերող համաժողովին Սփյուռքից հրավիրելու ենք մասնագետների, որոնց օգնությամբ փորձելու ենք նպատակային ծրագրեր ստեղծել և համահայկական դասագրքեր:

Ինչպես արդեն նշել էի, հայ ներուժի հայտնաբերման և օգտագործման կարևորությունը գիտակցելով, այս տարի ևս գումարելու ենք չորս համահայկական մասնագիտական համաժողով և բարձրացվող հարցերից մեկը վերաբերում է խառնամուսնություններին: «Հայ ինքնության որակների պահպանումը խառնամուսնություններում» թեմայով համաժողովին հրավիրելու ենք մասնագետների Ռուսաստանից, Լեհաստանից, ԱՄՆ-ից, ինչպես նաև բուն խառնամուսնական զույգերի և այդպիսի ամուսնություններից ծնված զավակների, որոնց օրինակով կարող ենք տեսնել հայապահպանության պատկերը:

Մյուս համաժողովը նվիրված է հիսունական թվականներից ի վեր Հայաստանի բուհերն ավարտած շրջանավարտներին: Նրանք ուսում են ստացել հայրենիքում և եթե այսօր կարգին մասնագետ են համարվում դրսում, ապա դա նաև մեր բուհերի արդյունքն է: Համաժողովի արդյունքում ակնկալում ենք սկսել նաև բիզնես ծրագրեր:

Եվ, վերջապես, գումարելու ենք բանկիր-ֆինանսիստների համաժողով, որը ներկա ֆինանսական ճգնաժամի պայմաններում կարող է որոշակի խնդիրների լուծում տալ:

Մոտենում է Ցեղասպանության 95-ամյա տարելիցը և, բնականաբար, Սփյուռքի նախարարությունը չի կարող զերծ մնալ դրա հետ կապված միջոցառումներից: Ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հետ մենք կազմակերպում ենք «Մշակութային եղեռն» համաժողովը, որտեղ կփորձենք ներկայացնել իրողությունը՝ և Թուրքիայում, և Ադրբեջանում: Բացվելու է

եղեռնի խնդիրներին նվիրված ցուցահանդես հայաստանցի և սփյուռքահայ նկարիչների ուժերով: Ապրիլի 20-ից 30-ը Սունդուկյանի թատրոնում, ՀԲԸՄ հետ, հովանավորելու ենք այն բոլոր ներկայացումների ցուցադրությունը, որոնք վերաբերում են Ցեղասպանությանը: Միաժամանակ Ռուսաստանի հայերի միության հետ սկսել ենք իրականացնել 1,5 միլիոն ծառատունկ, ինչը պետք է ավարտին հասցնենք մինչև Ցեղասպանության 100-ամյա տարելիցը: Նույն ժամանակահատվածում նախատեսել ենք պատրաստել աշխարհում եղած Մեծ եղեռնին նվիրված բոլոր հուշակոթողների մանրակերտերը և տեղադրել Ցեղասպանության հուշահամալիրում: Տպագրելու ենք նաև այդ հուշարձանների պատկերագիրքը: ՀՕՄ-ի հետ տոնելու ենք կազմակերպության փառահեղ 100-ամյակը:

- Հայ-թուրքական հարաբերությունների հաստատման արձանագրությունների ստորագրումն ալեկոծեց սփյուռքահայությանը: Դուք վկան եք եղել այդ ալեկոծման դրսևորումներին մի շարք երկրներում: Որպես Սփյուռքի նախարար Դուք հղարտացա՞ք այդպիսի հզոր Սփյուռքի

համար, թե՞ մտահոգվեցիք, որ ազգային խնդիրներում սփյուռքահայն ավելի զգայուն է և որ «ջերմությունների» տարբերություն կա Սփյուռքի և Հայաստանի միջև:

- Ես հպարտ եմ, որ այսօր նման Սփյուռք ունենք: Եթե Սփյուռքը լռեր, եթե չբողոքեր, եթե ուշադրություն չդարձներ, կնշանակեր, որ Սփյուռքի համար Ցեղասպանության հարցն այլևս վերջացած է: Հակառակը, փաստորեն այս արձանագրությունների հետ կապված խնդիրը կարծես նոր խթան հանդիսացավ ու նորից բոլորին համախմբեց: Եվ ցույց տվեց, որ Հայաստանի հետ գործ ունենալը նշանակում է գործ ունենալ 10 միլիոն հայի հետ: Դա հասկացան բոլոր պետությունները ու բոլոր միջազգային կառույցները: Ես կարծում եմ, որ Նախագահի այդ օրերի այցը հայաբնակ մի շարք երկրներ աննախադեպ երևույթ էր և ներքին խիզախություն էր պահանջում: Գիտակցելով, որ Սփյուռքն ալեկոծված է, նա չխուսափեց հանդիպումից ու գնաց իբրև հայ մարդ հայ մարդկանց հետ խոսելու:

Մենք պիտի էլ ավելի հզորացնենք Սփյուռքի ներուժը, ուժեղացնենք և աջակցենք լոբբիստական կազմակերպություններին, Ցեղասպանության խնդիրը պետք է ահագնացնենք, միջազգայնացնենք, իսկ Սփյուռքը պետք է համոզված լինի, որ Հայաստանը Ցեղասպանության խնդիրը երբեք չի սակարկելու: Կարծում եմ, Սփյուռքի այսօրվա անհանգստությունը Արցախի հիմնախնդրի շուրջ նույնպես գովելի է: Ես շատ հանդիպումների մասնակցեցի և ինձ ուրախացրեց, որ այս տարի ավելի ակտիվորեն են նշվում նաև սումգայիթյան իրադարձությունները, Բաքվի ջարդերը, որ Սփյուռքը սկսել է պահանջատիրությամբ հանդես գալ նաև այդ հարցերում: Իհարկե, եղան ծայրահեղ քննադատական ելույթներ, որը ես անընդունելի եմ համարում, որովհետև և Հանրապետության ղեկավարության, և հայ ժողովրդի ձգտումներն ու նպատակները նույնն են, որը ևս մեկ անգամ ընդգծվեց ՀՀ Նախագահի ուղերձում: Նույն ինքը Սփյուռքն իր մեծամասնությամբ գտնում է, որ մի քանի արտահայտություններ պարզապես չպետք է հնչեին ցույցերի ժամանակ, թեև ցույցերը, որպես այդպիսին, անհրաժեշտ էին:

Անշուշտ, ես համաձայն եմ, որ Սփյուռքն ավելի զգայուն է ազգային հարցերում, քանի որ նա ցեղասպանության արդյունք է: Նա ապրում է հայրենիքից հեռու, հիմնականում զարգացած երկրներում, տնտեսապես ապահովված են, կենցաղային դժվարություններից ձերբազատված, տվյալ երկրի քաղաքական խնդիրներին գրեթե չեն մասնակցում, ավելի շատ հետաքրքրված են Հայաստանի քաղաքականությամբ, և միաժամանակ զգացմունքային այդ հիմքում ընկած է դարավոր վերքը, որը միշտ մորմոքվող է: Եվ, ի՞նչ խոսք, հայ ժողովրդի իրավունքների համար նրանց պայքարը ես միայն ողջունում եմ:

- Ձեր հարցազրույցներից մեկում Դուք ասել եք, որ հայի հավաքական երջանկությունը հայրենիքն է: Հայաստանի Հանրապետությունը նկատի ունեք՞ հայրենիք ասելով, թե նաև այն տեսլականը, որ փայփայում է Սփյուռքը և ցանկանում տեսնել այդ տեսլականի անդրադարձումը Հայաստանի Հանրապետության ռազմավարական ծրագրերում:

- Այո, ես իրոք համոզված եմ, որ հայի հավաքական երջանկությունը հայրենիքն է, հզոր Հայաստան ունենալն է, և ես ինքս մասնակիցն եմ եղել Սահմանադրության այն նախագծի մշակմանը և հետագայում՝ հանրաքվեին, որտեղ մենք հայերեն գեղեցիկ տառերով գրել ենք, որ մենք իրականացնելու ենք մեր պապերի դարավոր երազանքը:

Ես համոզված եմ, որ դրսում ապրող ցանկացած հայի հայացքը, միևնույն է, ուղղված է դեպի Հայաստան: Ես համոզված եմ, որ հայ ժողովրդի հույսը, հայ ժողովրդի ողնաշարը, հայ ժողովրդի արմատը՝ Մայր Հայրենիքն է: Հայ ժողովրդի ոգին, խիղճը՝ Արցախ աշխարհն է, իսկ հայ ժողովրդի պատիվը՝ Սփյուռքն է: Հետևաբար մեր խիղճը, պատիվը և հույսը մենք պետք է միասնաբար փայփայենք ու հզորացնենք՝ համայն հայության հայրենիքը կառուցելով, իսկ համայն հայության հայրենիքի կարևորագույն գրավականն արտահայտված և ամփոփված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախաբանում, որտեղ ասվում է, որ Հայաստանի անկախության մասին հռչակագրում հաստատված սկզբունքներն ինքնիշխան պետության վերականգնման իր ազատասեր նախնիների սուրբ պատգամը կատարելուն են ուղղված: Հայ ժողովուրդն ինքն է հիմք ընդունում այս փաստաթուղթը և հետևաբար հայ ժողովրդինն է այս հայրենիքը:

Հարցազրույցը վարեց Լիլիթ Հովսեփյանը

Հայրենիք-Սփիւռք.

անկախութիւն եւ ինքնաճանաչում

Սիւզան Խարիրպէեան

Երեւի շատերս կը յիշենք, թէ ինչպիսի մեծ յոյսեր կը ներշնչէին հայ մարդուն՝ հայրենիքն ներս եւ դուրս, Արցախեան շարժման անակնկալ պայթումը եւ այդ շարժման հետեւող Հայաստանի տարածքին թավշեայ յեղափոխութիւնը: Կը հաւատայինք, որ Հայաստանը իր խորհրդային փորձով պիտի հարստացնէր արեւմտեան աշխարհում սփռուած հայութեան քաղաքական ընկալումները, իր հետ բերէր նոր եւ թարմ գաղափարներ, ընդունէր համազգային նոր արժէքներ: Արցախեան շարժումի սերունդը ցոյց պիտի տար գալիքի ճամբան: Մեր հայրենակիցները ծնունդ պիտի տային այլընտրանքային «երրորդ ճամբու» մի նոր համակարգի: Նոր պատկերացում, որ մեր հնարաւորութիւնները պիտի չսահմանափակէր համայնավարութեան եւ դրամատիրութեան միջեւ սոսկ ընտրութիւն կատարելով, եւ մեզ հեռու պահէր անտառային, գազանային դրամատիրութեան ճամբէն:

Այս յոյսերը հենուած էին այն ենթադրութեան վրայ, որ մեր ժողովուրդը համայնավարական կարգերու լուծին տակ, անկրկնելի տառապանքի եւ ցաւալի փորձառութեան բերումով, աւելի լաւ մարդ էակներ ըլլալու, աւելի արթուն, լայն հետաքրքրութիւն, զգայուն

եւ մսաւորական ըլլալու անկուշ ներուժ ունի:

Այսօր, վերջին տասնամեակներու իրադարձութիւններու լոյսին տակ, այդ յոյսը պաթետիկ կը թուի: Եւ յստակ է, որ մեր, իմա՝ արեւմտահայութեան պատկերացումները կամ երազները եթէ ոչ սին, գոնէ իսկապէս նայիւ էին:

Յետ-համայնավարական հասարակութիւնները, ներառեալ Հայաստանը, երբեմ չեն ունեցած Արեւմուտքին իմաստալի պատգամ փոխանցելու ինքնահաւանութիւնը: Այս հասարակութիւններու հիմնական առաքելութիւնը այս վերջին տասնամեակներուն եղած է հարմարուիլ, ինչքան շուտ՝ այնքան լաւ, երկու մեծ գաղափարախօսութիւններու բախումէն յաղթական դուրս եկած կողմին: Միջազգային մարմինները Հայաստանին, նաեւ Արեւելեան Եւրոպայի երկիրներուն, պարտադրեցին յստակ բանաձեւուած ուղենիշեր՝ ժողովրդավարութիւն կերտելու եւ շուկայական տնտեսութիւն հաստատելու համար: Քոպենհակընի ցուցանիշները եւ Վաշինկթոնի ֆոնսենսուսը դարձան մեր քաղաքական վերնախաւի ձեռին դասագրքեր: Այնքան շաս բան կար փոխելու, ընելու, որ մտածելու, խորհրդածելու ժամանակ չկար.- մի բան, որ առաս էր հին խորհրդային ռէժիմի օրերուն:

Բազմաթիւ պարտադրանքներուն տակ իսկապէս ժամանակ չկար մտածելու, վերլուծելու այն գործընթացի մասին, որուն պարզապէս պատրաստ չէր ոչ հայրենիքը եւ ոչ ալ Սփիւռքը:

Այսօր յետադարձ ակնարկով կը տեսնենք, որ 1988-89 յեղափոխութիւնը տեղի ունեցաւ գլոբալ փոփոխութիւններու մի ժամանակահատուածի մէջ, ուր հիմնական կատալիզատորը ոչ թէ համայնավար գաղափարախօսութեան փտածութիւնն եւ համակարգի ամբողջական անկումն էր, այլ գլոբալիզացիան, որ արդէն հասեր էր բարձր մակարդակներու, եւ հետեւաբար համայնավարութեան փլուզումը միայն կարող էր նպաստել laissez-faire դրամատիրութեան հանդէպ աճող էյֆորիային:

Դրամատիրութեան անվիճելի յաղթանակը ընկալվում էր հիմնականին մէջ տնտեսական տեմպերով, սակայն մեր պարագային համայնավարութեան փլուզումով յանկարծ Արեւմուտքի սփիւռքահայութիւնը կորսնցուց արեւելեան այն հայելին, որ մեզ, արեւմտահայութեան, կը պարտադրէր ոչ միայն աւելի լաւ մարդ ըլլալ, այլեւ աւելի լաւ գործել: Այդ հայելիի չքանալով ինքնին մեր մէջ վերացաւ, խախտուեց յետյեղափոխութիւն ժամանակահատուածի մէջ մեր պատասխանատուութեան զգայնութիւնը, բարոյական մեր պարտաւորութիւնները համընդհանուր հայութեան իրավիճակի նկատմամբ: Բոլորս, անշուշտ, կը հասկնայինք, որ ինչ որ մի բան սխալ է, սակայն ժամանակ չունէինք այդ մտահոգու-

թիւնը լուրջի առնելու եւ անոր լուծմամբ զբաղելու:

Միւս կողմէ, Հայաստանի համար, Արեւմուտքը անփոփոխ երազ էր, ուրի շատ մօտիկ երազ՝ բոլորի կողմէ փայփայուած: Այնպէս որ, ամբողջ 1990ական թուականներուն, բոլորս, հայրենիքէն դուրս եւ ներս, ճիգ չխնայեցինք դրամատիրութիւն կերտելու, առանց հասկնալու, որ դրամատիրութիւնը ազատագրուած մեր հայրենիքէն ներս արդէն կորսնցնելու վրայ է իր բովանդակութիւնը երկու հիմնական ուղղութեամբ՝ չքացեր էին արդարութեան եւ պատասխանատուութեան մեր զգայնութիւնները: Կը մտածէինք, թէ համատարած այն կոռուպցիան, որու ականատես կըլլայինք, բնական էր դրամատիրական կարգերուն համար, կը նայէինք մեր շուրջ եւ կը տեսնէինք այդ բոլորի կենդանի օրինակները, Ամերիկայէն սկսած մինչեւ Եւրոպայի քաղաքակիրթ երկիրները: Կոռուպցիա կար ամեն տեղ, միշտ ալ այդպէս եղած էր: Բոլորս ալ ինչ որ չափով ինքնակամ որոշեր էինք հանդուրժել ցեղակով տեղի ունեցող աւազակութիւնը, մտածելով, թէ այդ աւազակութիւնը, յափշտակումը բնական է, դրամատիրական կարգերու բնոյթի անբաժան մասն է: Նոյնիսկ այսօր կը դժուարանանք ընդունիլ, որ դրամատիրութեան այն տեսակը, որ արմատ նետած է մեր հայրենիքի մէջ, սխալ է եւ կը ներկայացնէ միայն այն յատուկ տեսակը, որ խորքին մէջ կը ծլի ու կ'աճի միայն բարոյական արժէքներէ զուրկ հասարակութիւններէ ներս:

Այս բոլորը մեզ կը մտահոգէին, սակայն կարծես թէ պատրաստ չէինք ընդունելու, սխալը տեսնելու: Այսօրուան մեր համազգային տագնապը միայն նոր միլիարդներ մուծելով կրկին հարստանալու գործին անցնելու մասին չէ: Խնդիրը հասարակական նոր գործընթացներու մասին է, որ անկասկած մեծ ազդեցութիւն պիտի ունենայ հայութեան ապագայի վրայ: Իմ տեսակէտով, այս իրողութիւնը շատ քիչեր պատրաստ են ընդունելու հայութեան հայրենի եւ արտերկրի հատուածներէն ներս: Կը թուի թէ մենք միւս ժողովուրդներէն կը տարբերինք ճիշտ այս կէտով, մեր կուրութեամբ, մեր վարանումով եւ ձգձգումներով:

Այս կուրութիւնը ինքնակամ է, ոչ պարտադրուած: Այն կ'ընդգրկէ թէ վերջին քսան տարիներու դրամատիրութիւն հաստատելու մեր ընկալումը, անվարանութիւնը, թէ նաեւ խորհրդային կարգերու ժամանակահատուածի արժեւորման խուսափումը: Թերեւս ինչ որ մի տրամաբանութիւն կայ մեր վարանումին մէջ, պարզապէս մենք չենք ուզեր յեն մնալ համաշխարհային կարեւոր իրադարձութիւններէն: Կ'ուզենք մենք եւս դառնալ անբաժան մաս 1988-89 թուականներու Եւրոպայի պատմութեան ամենամեծ պահերէն մէկուն: Մենք ալ մաս կ'ուզենք կազմել այդ պատմական անկրկնելի իրադարձութեան:

Սակայն այդ թուականէն անցած է աւելի քան երկու տասնամեակ: Եւ մեր ակտերու գնահատումը, անցնող երկու տասնամեակներու համար, կ'ուշանայ: Ժամանակը աննախադէպօրէն շռայլ եղած է մեր հանդէպ: Թերեւս մենք պիտի ուրախ ըլլանք, որ պատմութիւնը մեզ շնորհեց այս 20-22 տարիները, աւելի վաս ժամանակներու պահին հաւասարապէս պատրաստուելու համար: Արցախեան պայքարի յաղթանակը, անոր յաջորդած յարաբերական «խաղաղ տարիները», Սեւծովեան տարածաշրջանի վրայ գերտէսութիւններու պայքարի համեմատաբար պահուած հաւասարակշիռը: ՆԱՏՕ-ի դանդաղ յառաջխաղացքը, Եւրոպայի փափուկ ուժի ներթափանցումը... Ճիշդ է որ որոշ ժամանակ անց, այս երկու տասնամեակներուն, Հայաստանի իրագործումները իսկապէս շշմեցնող պիտի թուի բոլորիս: Սակայն կայ նաեւ մէկ անվիճելի իրողութիւն: Գալիք տարիներուն աշխարհը եւ յատկապէս Արեւմուտքը ոչ ժամանակ եւ ոչ ալ այսքան դրական տրամադրութիւն պիտի ցուցաբերէ մեր հայրենիքի նկատմամբ:

Հայաստանը երբեւիցէ, ինչ խօսք, սահմանափակ, սակայն այս ասպիճանի քաղաքական անկախութիւն չէ վայելած: Սակայն այս ինքնաիրագործումը, ինչքան ալ շշմեցնող, մինչ այսօր եղած է կոնֆորմիստ, յարմարողական: Անշուշտ, այս կամ այն խընդրի, գործընթացի շուրջ ունե-



ցած ենք զգացական բուռն վէճեր: Սակայն այդ քննարկումները կը յաստանդուին դուրսէն ներմուծուած կամ արեւմտեան աշխարհի կողմէ մեզի պարտադրուած արժէքներու իրացումով: Այդ քննարկումները միշտ եղած են պրագմատիկ, ամենէն արագ ճամբով Արեւմուտքին միանալու, մեր անցեալը յետին պլանի վրայ ձգելու եւ նոր ապագային հասնելու համար: Մեր անցեալի, մեր նախնիներու կտակի նկատմամբ նաեւ մեր անփոյթ վերաբերմունքը - Սփիւռքի ապագան, Հայոց Ցեղասպանութեան ճանաչում, Հայ Դատ, խորհրդային կարգերէն կտակուած անարդարութիւններ - եղած է պրագմատիզմի արդիւնք: Յարդ նպատակը եղած է մէկ՝ տրանսֆորմացիան արագացնել: Նպատակը երբեք չէ եղած վերլուծել վերջին թէկուզ հարիւր տարիներու մեր պատմութիւնը, այլ ստեղծել միջավայր հարստանալու, արագ հարստանալու:

Սակայն Սփիւռքը ունէր հիմնական մի ակնկալութիւն: Ունէր հաւատքը, որ խորհրդային ամբողջատիրութեան փորձառութենէն մըղուած, հայրենի հայութիւնը մեզ պիտի սովորեցնէր մի բան՝ մեր ուշադրութիւնը կիզել «ազատութիւն» արժէքի վրայ: Ազատութիւնը սիրել, գուրգուրալ ձեռք բերուած այս իրագործման վրայ: Սակայն պատահեց մէկ ուրիշ բան. շուտով յստակեցաւ, որ նորանկախ Հայաստանը հաւաքաբար ձախողեցաւ Սփիւռքին - եւ նաեւ համաշխարհային հանրային կարծիքին - փոխանցել եւ բանաձեւել այս շատ կարեւոր insight: Փոխարէն մեզի հրամցուց միայն մի քանի երեւելի դէմքեր, անուններ, որոնք բռնագրաւեցին հասարակական կեանքի բոլոր հարթակները:

Հետեւաբար, դեռեւս Հայրենիքը պարտական է պատշաճ ձեւով հասկնալ եւ բանաձեւել ազատութեան մեր իրայատուկ պատկերացումը եւ արդիւնք- փորձառութիւնը: Կրնայ պարադոքսալ թըւիլ, բայց կարծես այն պատճառով, որ բոլորս խեղդուած ենք անցեալի մասին տեղեկութիւններով: Մեզ կը թուի, թէ ամեն բան գիտենք անցեալի մասին, Ցեղասպանութեան մասին, Հայաստանեան խորհրդային կարգերու ծնունդ անմարսելի անարդարութիւններու մասին: Այո, աշխատութիւններ կան, կարեւոր դէմքերու եւ դէպքերու մասին վաւերագրեր հրատարակուած են, սակայն կը թուի, որ մենք չենք կրնար համաձայնութեան գալ անցեալին շուրջ. իսկապէս՝ ինչպիսի՞ն էր մեր մօտակայ անցեալը:

Վերջին քսան տարիներու քննարկումները կը մատնանշեն մի բան. չենք կրնար համաձայնութեան գալ եւ բնու-



թագրել, թէ ինչ է ազատութիւնը: Հետեւութեամբ կարողանում ենք ըսել, թէ ով է քաջը, ով է վախկոտը, կարողանում ենք զոհը զանազանել դահիճից, բայց մեզի կը պակսի ազատ աշխարհի յատուկ այն լեզուն, որմով կարենանք հասկնալ՝ ով է ազատ, ով է ոչ-ազատ: Ազատ մարդու կատեգորիան ուղղակի չկայ:

Հակադրութիւնը, դիմադրութիւնը, սիստեմից դուրս ադրելու փորձերը կարող ենք համարել ազատութեան ձգտումի արտայայտութիւններ: Բայց այդ բոլորը համարժէք չեն ազատութեան: Մեր բոլոր ազգային հերոսները, խորհրդային կարգերու դէմ պայքարող մեր հանրաճանաչ այլախոհները, բոլորը շատ յարգելի են, սակայն սա մեզի իրաւունք չի տար յայտարարելու, որ մենք կարող ենք մեր պատմութիւնը մեկնաբանել ազատօրէն:

Վերջին 20 տարիներու ընթացքին հայրենիքի քաղաքական պայքարը իրականութեան մէջ պայքար էր պատմութիւնը մեկնաբանելու իրաւունքի եւ այդ իրաւացիութեան ձեռք բերման համար: Այլ խօսքով՝ այլախոհներ, խորհրդային կարգերու զոհ գացած մարդիկ, պրագմատիստներ, գործ-գոնի համայնավարներ, ազատութեան գործակալներ, բոլորը պայքարած են լեգիտիմութիւն ձեռք բերելու համար:

Քաղաքական այսօրուան էլիտայի մարդիկ, իրենց երիտասարդ տարիներուն, եղած են հաւատարիմ համայնավարներ, 60ական թուականներուն եղած են կրքոտ ռէֆորմիստներ, իսկ 70ական եւ 80ական թուականներուն՝ անվախ այլախոհներ: Հայկական կեանքի մէջ անոնք եղած են միաժամանակ մեր հայրենիքի վերջին տասնամեակներու պատմութեան թէ մասնակիցները, թէ հեղինակները եւ թէ սուր քննադատները: Հետեւաբար, նաեւ իրենց մօտ կայ այն համոզումը, թէ միայն իրենք կարող են հասկնալ եւ մեկնաբանել Հայոց պատմութիւնը:

Անոնք այս ձեւով, վերջին քսան տարիներուն, յաջողեցան հայութեան սփիւռքեան թեւը դուրս պահել, կամ գէթ հեռու պահել Հայաստանի քաղաքական կեանքէն, սոցիալական եւ տնտեսական ոլորտներէն:

Սակայն ճիշդ այս սերունդի թողած կտակը եւ ներկայութիւնը՝ մեր մօտակայ անցեալը մեկնաբանելու մոնոպոլիով զինուած, արգելք կը հանդիսանայ ինքնաճանաչումի, ինքնութեան խնդիրներուն պատասխան տալու այսօրուան մեր փորձին:

Հայաստանի մէջ, նաեւ հայրենիքի սահմաններէն դուրս, այսօր «պաղ- պատերազմեան» մի սերունդ սանձնելու վրայ է ապագայի պատասխանատուութիւնը: Սակայն նոր սերունդը, ազատութեան լեզուն գործածելու իմացութիւն ձեռք բերած նոր սերունդը, նոր ոճով, նոր արժէքներու հիման վրայ պիտի վերարժեւորէ եւ մեկնաբանէ մեր մօտակայ անցեալը:

Հ.Յ.Դ. ԲԻՒՐՈ ԳՐԱԴԱՐԱՆ A.R.F. BUREAU LIBRARY

Հայաստանը մարդկային զարգացման համակարգում

Բենիամին Միրզոյան



Ակսած 1990 թ.-ից ՄԱԿ-ը հրատարակում է մարդկային զարգացման զեկույցներ (ՄԶԶ), որոնցում դիտարկվում են ժամանակակից հասարակությանը հուզող գլոբալ հիմնահարցեր, առաջարկվում դրանց լուծման ուղիները և մեխանիզմները: ՄԱԿ-ի հայկական գրասենյակի անկախ փորձագետները նույնպես ընդհատումներով պատրաստել և հրատարակել են մարդկային զարգացման 8 ազգային զեկույցներ (ՄԶԱԶ), որոնք հիմնականում նվիրված են անցումային շրջանում հանրապետության առջև ծառացած սոցիալ-տնտեսական ու հասարակական խնդիրների լուսաբանմանը:

ՄԱԿ-ի մարդկային զարգացման վերջին զեկույցը (2009 թ.) հիմնովին խառնեց աշխարհի տնտեսական քարտեզը: «ՀՆԱ-ի զանգվածային վերա-

հաշվարկման» արդյունքում արմատապես փոխվեց առանձին երկրների ու տարածաշրջանների տնտեսական հզորությունների հարաբերակցությունը: Հարուստ երկրները դարձան ավելի հարուստ, իսկ աղքատներն՝ ավելի աղքատ: Գրեթե 2 անգամ կրճատվեց Չինաստանի ու Հնդկաստանի մասնաբաժինը համախառն համաշխարհային արդյունքում (ՀՀԱ): «Սև ցուցակի» մեջ հայտնվեց փոքրածավալ տնտեսություն ունեցող Հայաստանը:

Այս ամենն առաջացրեց տարակուսանք: Խոսքը վերաբերում է գլոբալ սկզբունքային հիմնախնդիրներին, որոնք ունեն գիտական, ճանաչողական ու քաղաքական կարևոր նշանակություն: Ուստի կփորձենք վերլուծել, թե որքանով են այդ «վերահաշվարկներն» արտացոլում իրականությունը:

Ինչպես է որոշվում ՄԶՀ-ն

Մարդկային զարգացման համաթիվը (ՄԶՀ) ներառում է կյանքի սպասվող տևողությունը, կրթության մակարդակը և բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն: Դրանք կարող են տատանվել 0,001-1.000 սահմաններում: Իսկ դրանց միջին թվաբանականով որոշվում է տվյալ երկրի գրված դիրքը ՄԶՀ-ում: Այսպես, Մարդու զարգացման 2009 թ. զեկույցում Հայաստանում կյանքի սպասվող տևողությունը (73,6 տարի) 2007 թ. կազմել է 0,810, կրթական մակարդակինը՝ 0,909, իսկ մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն՝ 0,675: Դրանց միջին թվաբանականը (0,798) հնարավորություն է տվել մեր հանրապետությանն աշխարհի 182 երկրների շարքում զբաղեցնել 84-րդ տեղը:

ՄԱԿ-ն առաջին անգամ մտցրեց երկրների դասակարգման նոր չափորոշիչ, ըստ որի առանձնացվում են շատ բարձր ՄԶՀ ունեցող երկրները (համաթիվը՝ 0,900-1000): Դրանք առավել զարգացած 38 երկրներն են, որոնցից 22-ը՝ եվրոպական: Մնացած երկրները համարվում են զարգացող, որոնք իրենց հերթին բաժանվում են 3 խմբի՝ զարգացած (համաթիվը՝ 0,8000-0,899), միջին զարգացած (0,5000-0,799) և ցածր ՄԶՀ ունեցող երկրներ (մինչև 0,500): Հայաստանը միջին մակարդակի ՄԶՀ ունեցող 75 երկրների մեջ զբաղեցնում է առաջին տեղը:

Անկասկած, այդ բոլոր ցուցանիշների մեջ որոշիչը հանդիսանում է բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն, այլ կերպ՝ տվյալ երկրի տնտեսական հզորությունը, առանց որի պետությունն անկարող է առանձնացնել անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսներ երկրի առողջապահության, կրթության, գիտության, սոցիալական ապահովության հիմնախնդիրները լուծելու համար: Այս տեսանկյունից Հայաստանի ՄԶՀ-ի խոցելի օղակը նրա տնտեսությունն է: Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ով նա զբաղեցնում է 182 երկրների մեջ 98-րդ տեղը, մինչդեռ երկարակեցությամբ՝ 55, իսկ կրթական մակարդակով՝ 54-րդ տեղը:

Սակայն, կան նաև անչափ հարուստ երկրներ (հատկապես նավթարդյունահանող), որոնք դասվում են շատ բարձր ՄԶՀ ունեցող երկրների շարքում (Քուվեյթ, Քաթար, Միացյալ Արաբական Էմիրաթներ), բայց առանձնապես աչքի չեն զարնում երկարակեցությամբ ու կրթական բարձր մակարդակով: Օրինակ, Քուվեյթում և Հայաստանում բնակչության թիվը գրեթե հավասար է: Մինչդեռ Հայաստանում կրթական մակարդակն ավելի բարձր է, չնայած Քուվեյթում բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն 2007 թ. 8,3 անգամ ավելի է, քան մեր հանրապետությունում: Կուբան հաշվվում է աղքատ երկիր, մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ով զիջում է ԱՄՆ-ին 6,6 անգամ: Մինչդեռ կրթական մակարդակի համաթվով դասվում է առաջին հնգյակի շարքում (Ավստրալիա, Նոր Զելանդիա, Դանիա, Ֆինլանդիա): ԱՄՆ-ը միայն 18-րդ տեղում է:

Նկատենք, որ ՄԶՀ-ն քանակական վիճակագրական ցուցանիշ է և չի արտացոլում յուրաքանչյուր համաթվի (ինդեքսի) որակական հատկանիշները: Տարբեր երկրների կրթական մակարդակները կարող են ունենալ հավասար գործակից, բայց որակական հատկանիշները լինեն խիստ տարբեր: Ավելին, նույն երկրում կրթության որակը կարող է փոփոխվել: Այսպես, Խորհրդային Հայաստանը 80-ական թվականներին 1000 բնակչի հաշվով միութենական հանրապետությունների մեջ զբաղեցնում էր առաջին տեղը բարձրագույն ու միջնակարգ մասնագիտական հաստատություններում սովորողների թվով: Ներկայումս այդ ցուցանիշով առաջ են անցել մի շարք, արդեն անկախ պետություններ, չնայած ամենուրեք, այդ թվում նաև ՀՀ-ում, բուհերում սովորողների թիվն ավելացել է 2 և ավելի անգամ: Մինչդեռ կասկածանք է հարուցում ուսուցման որակի բարելավումը:

Կրթության համաթիվը նենգափոխվում է նաև

միգրացիոն գործընթացների ակտիվացման, հատկապես «ուղեղների» ինտենսիվ արտահոսքի հետևանքով: Հասկանալի է, որ զարգացած ու հարուստ երկրները ոչ մի ծախս չկատարելով, էլ ավելի են հարստանում զարգացող երկրների հաշվին: Բավական է նշել, որ, ՄԱԿ-ի տվյալներով, 15 տարում (1991-2005 թթ.) արտագաղթողների թիվը կազմել է 40 մլն. մարդ, որոնցից ԱՄՆ-ն ընդունել է 16 մլն., իսկ Եվրոմիության երկրները՝ 15 մլն. մարդ: Այդ ընթացքում ավելի քան 1,5 մլն. հայեր արտագաղթել են Հարավային Կովկասից, որոնց գրեթե 75%-ին ընդունել է Ռուսաստանը:

Նույնպիսի հակասական ցուցանիշ է կյանքի սպասվող տևողությունը, որը չի արտացոլում առողջ կյանքի վարքագծի կարևորագույն հատկանիշները: Ավելին, բացասական ժողովրդագրական գործընթացները հատկապես զարգացած երկրներում դրականորեն են անդրադառնում երկարակեցության ավելացման վրա: Եվրոպական շատ երկրներում չի ապահովվում բնիկ բնակչության պարզ վերարտադրությունը, բնակչությունը ծերանում է, հետևապես բարելավվում է նաև կյանքի սպասվող տևողության ցուցանիշը, անցնելով 80 տարիքի սահմանը (Շվեդիա, Իսպանիա, Նորվեգիա, Իտալիա):

Խորհրդային Հայաստանը նույն այդ ցուցանիշով միութենական հանրապետությունների մեջ 1985-1986 թթ. գրավել է առաջին տեղը (73,3 տարի): Գրեթե նույն տարիքը (73,6) պահպանվել է 2007 թ., որը լավագույնն է նույն 15՝ արդեն անկախ երկրների շարքում: Սակայն այդ, կարծես, բարվոք ցուցանիշի հետևում թաքնված է այն տագնապալից փաստը, որ 1000 բնակչի հաշվով 2008 թ. 1986 թ. համեմատությամբ ծնվածների թիվը կրճատվել է 42,3%-ով, իսկ մահացածներինն ավելացել է 63,5%-ով: Արդյունքում հանրապետության բնակչության բնական աճը կրճատվել է 3,9 անգամ: Կտրուկ վատացել է բնակչության տարիքային կազմը: Եթե 1990 թ. 0-15 տարիքի երեխաների բաժինը կազմում էր 32,3%, ապա 2009 թ. սկզբին՝ 20,2%, իսկ թոշակային տարիքի մարդկանց տեսակարար կշիռը բարձրացել է 4 տոկոսով:

Հայաստանի դիրքը համաշխարհային տնտեսությունում

Տարբեր երկրների տնտեսական հզորությունը (ՀՆԱ-ն) համադրելու համար անհրաժեշտ է տվյալ երկրում արտադրվող ապրանքների ու ծառայությունների արժեքը որոշել ոչ թե ազգային արժույթի ու դոլարի փոխանակման կուրսով, այլ գնողունակության համարժեքով (ԳՀ): Միջազգային համադրումների ծրագրի (ՄՀԾ) շրջանակներում այդ հաշվարկները հիմնականում կատարում է Համաշխարհային բանկը (ՀԲ):

Հարկ ենք համարում նշել, որ ՄԱԿ-ի զեկույցներում հանդիպում ենք տարբեր երկրների ՀՆԱ-ի համադրման խիստ հակասական, երբեմն էլ անհեթեթ գնահատականների: Այսպես, Խորհրդային Հայաստանի ՀՆԱ-ն բնակչության մեկ շնչի հաշվով, 1987 թ. գնահատվել է 25,4%, մի այլ տեղ՝ 5% (ԱՄՆ-ի նույն ցուցանիշի նկատմամբ, ԳՀ-ով):

Հայաստանի «Մարդկային զարգացման զեկույցում» (1995 թ.) արձանագրվել է, որ «Հանրապետության ՀՆԱ-ի ծավալը 1993 թ. 1989 թ. համեմատությամբ նվազել է շուրջ 55,6%-ով»: Միաժամանակ նույն զեկույցում (էջ 61) նշվում է, որ հանրապետության ՀՆԱ-ն, բնակչության մեկ շնչի հաշվով (ԳՀ-ով), 1987 թ. կազմել է 4465 դոլար, իսկ 1993 թ.՝ 510 դոլար, այսինքն՝ նույնիսկ ԱՄՆ-ի դոլարի արժեզրկման պայմաններում 9 անգամ տնտեսական անկում է գրանցվել:

Ո՞րն է իրականությունը: Այդ հարցին պատասխանելու համար 1987-2007 թթ. միջև ընկած 20-ամյա ժամանակաընթացքը ակնհայտորեն բաժանվում է երկու շրջանի: Առաջինը (1988 թ. ավերիչ երկրաշարժից մինչև 1995 թ.) տնտեսական աննախադեպ անկման փուլն է, երբ, մեր հաշվարկներով, նախկինում զարգացած ինդուստրիալ հանրապետությունը կորցրեց իր տնտեսական հզորության շուրջ 80% -ը:

Երկրորդ փուլը (1997-2007 թթ.) մենք համարում ենք վերականգնողական, չնայած այն դեռևս չի ավարտվել և գրեթե չի շոշափել արդյունաբերական ներուժի վերածնունդը: Մինչդեռ անգամ ՀԲ-ն համոզված է, որ 2004 թ. վերականգնվել է 1990 թ. ՀՆԱ-ն: Վիճակագրական տվյալներով, 2008 թ. դրությամբ ՀՆԱ-ի 1990 թ. մակարդակը գերազանցվել է 66%-ով: Հետևապես, կարելի է հանգիստ վերապրել

2009 թ. ճգնաժամը 15-16 %-ի սահմաններում, և, ինչպես խոստանում է Կառավարությունը, 2010 թ. նորից դուրս կգանք կայուն զարգացման ճամփուղին և ոչ հեռավոր ապագայում կդառնանք հետինդուստրիալ երկիր:

Ցավոք, հանրապետության տնտեսական նախկին հզորությունը դեռևս չի վերականգնվել պարզապես այն պատճառով, որ 1991-1994 թթ. տնտեսական անկման իրական պատկերը կեղծվել է ոչ պակաս, քան երկու անգամ: Իր հերթին ՄԱԿ-ի զեկույցներում չեն արտացոլվել 1996-2007 թթ. Հայաստանի տնտեսական աճի բարձր տեմպերը:

ՀՀ ՀՆԱ-ի միջին տարեկան հավելաճը 1996-2007 թթ. կազմել է 9,4 %, որն ավելի քան 3 անգամ գերազանցել է համաշխարհային տնտեսության նույն ցուցանիշը: Ըստ ՄԱԿ-ի տվյալների, 1995 թ. ՀՀ ՀՆԱ-ն կազմել է ՀՀԱ-ի 0,03 %-ը (ԳՀ-ով, ԱՄՆ դոլարով): Թվաբանական պարզ հաշվարկը ցույց է տալիս, որ 2007 թ. այդ նույն ցուցանիշը պետք է հասներ մինչև 0,062, այլ ոչ թե իջներ մինչև 0,026 %:

ՄԱԿ-ի «վերահաշվարկված» տվյալներով, գրեթե 2 անգամ իջել է Հայաստանի առանց այն էլ փոքր տեսակարար կշիռը տարածաշրջանի երկրների տնտեսական հզորության նկատմամբ: Այսպես, պաշտոնական վիճակագրական տվյալներով, ՀՀ ՀՆԱ-ն 9 տարում (1999-2007 թթ.) ավելացել է 2,5 անգամ, Ադրբեջանինը՝ 3,5, իսկ Թուրքիայինը՝ 43% -ով: Եթե հաշվարկների հիմքում ընդունենք տնտեսական աճի տեմպերը, ապա 2007 թ. Հայաստանը տնտեսական հզորությամբ (ԱՄՆ դոլար, ԳՀ-ով) զիջել է Ադրբեջանին 3, իսկ Թուրքիային՝ 30 անգամ: Մինչդեռ, ՄԱԿ-ի զեկույցում 2007 թ. այդ տարբերությունները, համապատասխանաբար, կազմել են 4 և 56 անգամ:

Հայաստանի դիրքը չի բարելավվել նաև ԱՊՀ երկրների շարքում, չնայած նրա ՀՆԱ-ն 2001-2007 թթ. ավելացել է 2,3 անգամ, իսկ ԱՊՀ երկրներինը, ամբողջությամբ վերցրած, 62 %-ով, այդ թվում Ռուսաստանինը 57 %-ով: ՄԱԿ-ի զեկույցներում բերված գնահատականներով, ՀՀ ՀՆԱ-ն ՌՖ-ի նույն ցուցանիշի նկատմամբ փոխվել է հետևյալ կերպ (ԱՄՆ դոլար,ԳՀ-ով):

Ռուսաստան=100

	1987	1990	1995	1997	2005	2007
ՀՀ ՀՆԱ-ն	1.8	1.4	1.5	1.2	1.0	0.8
Բնակչ. մեկ ընչի հաշվով	82	59	71	57	43	36

Աղյուսակում բերված գնահատականները զուրկ են տարբական տրամաբանությունից: Հայաստանը 1987 և 1995 թթ. միջև ընկած ժամանակաշրջանում ավելի քան 2 անգամ խոր տնտեսական ճգնաժամի մեջ է հայտնվել, քան Ռուսաստանը, որը և հանգեցրել է բնակչության զանգվածային արտագաղթին: Մյուս կողմից, ԱՊՀ միջպետական վիճակագրական տվյալներով, ՀՀ ՀՆԱ-ի միջին տարեկան հավելաճը 1996-2007 թթ. կազմել է 9,4, իսկ ՌՖ-ինը՝ 4,6 %: Պարզ է, որ մեր հանրապետության դիրքը Ռուսաստանի նկատմամբ պետք է բարելավվեր մոտ 2 անգամ, այլ ոչ թե նույնքանով վատթարանար: Հակառակ դեպքում արտագաղթն էլ ավելի կուժեղանար և հայրենիքը լրիվ կհայաթափվեր: ՀՀ 2001 թ. մարդահամարի ճշգրտված տվյալներով, ՀՀ մշտական բնակչության թիվը (3,2 մլն. մարդ) 1995 թ. հետո մնացել է անփոփոխ:

Կարծիք է հայտնվում (հատկապես ՀՀ նախկին վարչապետ Հ. Բագրատյանի հոդվածներում ու ելույթներում), որ Ռ. Քոչարյանի նախագահության 10 տարիներին Հայաստանի տնտեսական զարգացման տեմպերը կեղծվել են: Կեղծարարության մասին բարբաջում է մի տխրահռչակ պետական գործիչ, որի կառավարության «բարեփոխումները» հանգեցրին երկրի տնտեսության լրիվ կործանմանը: Բավական է նշել, որ 1991-1996 թթ. բնակչության իրական դրամական եկամուտները կրճատվեցին 6,7 անգամ, միջին ամսական իրական աշխատավարձը՝ 9,3, կենսաթոշակները՝ 12,3, պետական բյուջեի եկամուտները՝ 15,3 անգամ: Եվ դա այն դեպքում, երբ նույն վիճակագրությունը գրանցեց 44,1 % ՀՆԱ-ի անկում: Դա ակնհայտ կեղծված ցուցանիշ է, որի հեղինակը նույն վարչապետն էր:

Հետագա տարիների մակրոտնտեսական ցուցանիշների փոփոխության մեջ մենք հակասություն չենք տեսնում: Ավելին, բնակչության կենսամակարդակը բնութագրող ցուցանիշները բարելավվել են ավելի արագ տեմպերով, քան երկրի ՀՆԱ-ն: Այսպես, ՀՀ ՀՆԱ-ն 1998-2007 թթ. ավելացել է մոտ 2,7, մինչդեռ միջին ամսական իրական աշխատավար-

ձը՝ 4 անգամ (բնակչության իրական դրամական եկամուտները՝ 3,1, պետական բյուջեի հարկային եկամուտները և տուրքերը՝ 3,6 անգամ):

Այլ բան է, որ այդ բարձր ցուցանիշները ձեռք են բերվել մակրոտնտեսական խիստ ցածր ելակետային հիմքի վրա: Իրական աշխատավարձի 1990 թ. մակարդակը (չհաշված սպառման հանրային ֆոնդերից հավելավճարները) անգամ 2009 թ. առաջին կիսամյակի դրությամբ վերականգնվել է 64 %-ով, այն դեպքում, երբ Ռուսաստանում աշխատավարձի 1990 թ. իրական մակարդակը զգալիորեն գերազանցվել է: Պատճառն այն է, որ անկախության առաջին տարիներին ՌՖ-ում աշխատավարձն արժեզրկվել է 3, Բելառուսում՝ 2, իսկ ՀՀ-ում՝ ավելի քան 14 անգամ:

Այնուամենայնիվ, հանելուկ է մնում այն հարցը, թե ինչո՞ւ ՀՀ տնտեսական աճի բարձր տեմպերն իրենց արտացոլումը չեն գտնում ՄԱԿ-ի զեկույցների գնահատականներում: Իրոք, եթե համեմատության համար հիմք ընդունենք ԱՄՆ-ի ՀՆԱ-ն, որի արժանահավատությունը ՄԱԿ-ի զեկույցներում կասկածանք չի հարուցում, ապա կստանանք հետևյալ տվյալները:

Հայաստանի ՀՆԱ-ն բնակչության մեկ շնչի հաշվով (ԱՄՆ դոլար, ԳՀ-ով)

	1987	1995	1997	1998	2004	2005	2007
ՀՀ ՀՆԱ	4750	1788	2280	2360	4101	4945	5693
%-ով, ԱՄՆ-ի նկատմամբ	25,4	8,4	7,9	8,0	10,3	11,8	12,5

Որպեսզի այդ ցուցանիշները լինեն համադրելի, պետք է հաշվի առնել բնակչության թվի փոփոխությունը երկու երկրներում: Քսան տարվա ընթացքում (1988-2007 թթ.) ԱՄՆ բնակչության թիվն ավելացել է 60 մլն. մարդով (գրեթե 25%-ով), մինչդեռ Հայաստանի փաստացի բնակչության թիվը պակասել է 400 հազարով (մոտ 20%-ով): Բնակչության թվի նույն աճի պայմաններում ԱՄՆ-ի և Հայաստանի ՀՆԱ-ի տարբերությունը (մեկ շնչի հաշվով) 2007 թ. կկազմեր 12 անգամ:

ՄԱԿ-ի գնահատականներից պարզ երևում է, որ Հայաստանի տնտեսությունը 1987 և 1997 թթ. միջև ընկած ժամանակաընթացքում կործանում է ապրել: Հետագա տարիներին մեր հանրապետության դիրքը հարաբերականորեն բարելավվել է: ԱՄՆ-ի ՀՆԱ-ն 1998-2007 թթ. ընթացիկ գներով ավելացել է 78%-ով, իրականում՝ 33%-ով, իսկ բնակչության մեկ շնչի հաշվով՝ 18%-ով: Քանի որ ՀՀ մշտական բնակչության թիվը մնացել է գրեթե նույնը (3,2 մլն. մարդ), ապա վերահաշվարկված տվյալներով, ՀՀ ՀՆԱ-ն բնակչության մեկ շնչի հաշվով (ԳՀ-ով) 1997 թ. կազմել է 2708 ԱՄՆ դոլար, իսկ 2007 թ.՝ 5337 ԱՄՆ դոլար, կազմելով ԱՄՆ-ի նույն ցուցանիշի 9,3 և 11,7%-ը:

Այստեղից հետևում է, որ 1998-2007 թթ. ՀՀ ՀՆԱ-ն ամբողջությամբ վերցրած և բնակչության մեկ շնչի հաշվով ավելացել է մոտ 2 անգամ, իսկ համադրելի գներով՝ 47%-ով, այլ ոչ թե 2,7 անգամ, ինչպես արձանագրված է վիճակագրական բոլոր տեղեկագրերում:

Մեր հաշվարկներով, ՀՀ ՀՆԱ-ն բնակչության մեկ շնչի հաշվով 2007 թ. պետք է կազմեր ԱՄՆ-ի նույն ցուցանիշի ոչ թե 11,7%-ը, այլ 21,3%-ը (9,3x270/100x118=21,3): Դա արդեն ահռելի տարբերություն է, որը գրեթե 2 անգամ մեղմանում է



Source: Indicator table G of the Human Development Report 2009

Սփյուռքից հսկայական դրամական փոխանցումների ու չհաշվարկվող ստվերային տնտեսությունից ստացված եկամուտների հաշվին: Ընդ որում ոչ մի հայ հայրենիքը չի լքի, եթե նա այլ երկրում միջին աշխատավարձից առնվազն 2 անգամ ավելի եկամուտ չստանա: Մոտավոր հաշվարկներով, Սփյուռքի մեր հայրենակիցները ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Ռուսաստանում և այլ երկրներում շուրջ 10 անգամ ավելի ՀՆԱ են ստեղծում, քան Հայաստանի բնակչությունը:

Համաշխարհային տնտեսության խեղաթյուրված պատկերը

Որոշել առանձին երկրների դիրքն ու տեղը համաշխարհային համախառն արդյունքում (ՀՀԱ) չափազանց բարդ ու չլուծվող խնդիր է (եթե անգամ ազգային վիճակագրությունը տրամադրում է լիարժեք ու արժանահավատ տեղեկատվություն): Միջազգային համադրման ոչ մի մեթոդաբանություն ի վիճակի չէ հաշվի առնել տասնյակ հազարավոր ապրանքների ու ծառայությունների որակական հատկանիշների տարբերությունը, կառուցվածքային արագ փոփոխությունները, վիճակագրական ընդգրկվածության ու տնտեսության ապրանքայնության աստիճանը, ստվերային տնտեսության չափը, գների արագ տատանումները և այլն:

Դեռևս նախորդ դարի 80-ական թվականներին ՄԱԿ-ի, ՀԲ-ի, ԱՄՀ-ի, ԱՄՆ-ի ԿՀՎ-ի վիճակագրական ծառայությունների գիտնական-վերլուծաբանները մի շարք հաշվարկների օգնությամբ փորձեցին որոշել աշխարհի ՀՆԱ-ն և դրանում առանձին երկրների գրաված դիրքը, հիմք ընդունելով 1980 թ. պայմանական «միջազգային դոլարի» գնողունակությունը: Այդ հաշվարկներով, ԱՄՆ-ն, Չինաստանը, Խորհրդային Միությունը, Ճապոնիան 1987 թ. ապահովում էին ՀՀԱ-ի 52,7 %-ը: Ընդ որում, նրանց տեսակարար կշռի փոփոխությունը 1970, 1980 և 1987 թ. գնահատվել է տնտեսության իրական աճի հիման վրա:

Ուշագրավ է այն փաստը, որ հիշյալ 4 երկրների ՀՆԱ-ի աճի տեմպերը համընկնում են խորհրդային վիճակագրական տարեգրքերում բերված տվյալների հետ, բացառությամբ ԽՍՀՄ-ի: Ո՞րն է գաղտնիքը: Սույն տողերի հեղինակը դեռևս 70-ական թվականներին վերլուծել և պարզել է, որ խորհրդային վիճակագրությունը տարբեր մեթոդաբանական հնարքների միջոցով կեղծում էր ԽՍՀՄ տնտեսական աճի տեմպերը գրեթե 2 անգամ: Միաժամանակ նրա Վիճկոմիտեն ստիպված էր ընդունել, որ Խորհրդային Միության ազգային եկամուտը (ԱԵ) 1988 թ. կազմել է ԱՄՆ-ի նույն ցուցանիշի 64 %-ը: Գրեթե նույն գնահատականն է տրվել վերոհիշյալ հաշվարկներում:

Եթե ԱՄՆ-ի ՀՆԱ-ն ընդունենք 100%, ապա երեք մյուս հզորագույն երկրների տեսակարար կշիռը վերոհիշյալ հաշվարկներով կազմել է.

ԵՐԿՐՆԵՐ	1970	1980	1987
ՉԺՀ	44,0	63,4	97,2
ԽՍՀՄ	56,0	57,5	57,4
Ճապոնիա	29,6	36,5	8,2

Սակայն ՄԱԿ-ի զեկույցներում բերված հետագա հաշվարկներում հիմնովին անտեսվում են նախկին հեղինակավոր գնահատականները: Պարզվում է, որ Խորհրդային Միության 1987 թ. գրաված դիրքը ՀՀԱ-ում գերագնահատվել է մոտ 2, իսկ Չինաստանինը՝ նույնիսկ 3 անգամ: Հակառակը, ԱՄՆ-ի տեսակարար կշիռը ՀՀԱ-ում «թերագնահատվել» է 22 %-ով, իսկ Ճապոնիայինը՝ 16 %-ով:

Ստացվում է, որ ԽՍՀՄ-ը և ՉԺՀ-ն, միասին վերցրած, իրենց տնտեսական հզորությամբ 1987 թ. զիջել են ԱՄՆ-ին 2 անգամ: Եվ այդպիսի ծիծաղելի ցուցանիշով երկու գերհզոր սոցիալիստական երկրները դիմակայել են կապիտալիստական աշխարհի պետություններին:

Մի պահ ընդունենք, որ Չինաստանի տեսակարար կշիռը ԱՄՆ-ի ՀՆԱ-ի նկատմամբ 1987 թ. կազմել է ոչ թե 97,2, այլև 25,5 %:

Այժմ տեսնենք, թե ՄԱԿ-ի զեկույցներում ինչպես է փոխվել այդ հարաբերակցությունը (ԱՄՆ դոլար, ԳՀ):

ԱՄՆ=100

	1987	1990	1995	1997	2005	2006	2007
Չինաստան	25,5	29,0	44,3	50,4	71,0	76,6	51,6

Եթե հաշվարկների համար հիմք ընդունենք երկու երկրների տնտեսական աճի տարբերությունները,

ապա դժվար չէ նկատել, որ մինչև 2006 թ. դրանք (թեև ոչ լրիվ) արտացոլվել են ՄԱԿ-ի զեկույցներում: Չինաստանի ՀՆԱ-ն վերջին 10 տարում (1998-2007 թթ.) ավելացել է 2,4 անգամ, իսկ ԱՄՆ-ինը՝ 33 %-ով: Հետևապես, նրա տեսակարար կշիռը ԱՄՆ-ի ՀՆԱ-ում 2007 թ. պետք է կազմեր ոչ թե 51,7 %, այլ 94,7% (100x133/50,4x24=94.7):

«Մարդու զարգացման» վերջին զեկույցի հեղինակները գտնում են, թե «նոր տվյալները ցույց են տվել, որ գների մակարդակը շատ երկրներում (հատկապես զարգացող) եղել են բարձր, քան նախկինում ենթադրում էինք»: Կարևոր չէ նաև, որ ՄԱԿ-ի տարբեր զեկույցներում կատարվող շտկումները «չեն արտացոլում երկրներում իրական փոփոխությունները»: Այլ կերպ՝ մենք պետք է չհավատանք մեր աչքերին և ճշմարտության «վերջին խոսքը» պետք է համարենք «ՀՆԱ-ի զանգվածային վերահաշվարկման» արդյունքները:

Վիճակագրական «խաղերի» հետևանքները լուսաբանելու նպատակով, համեմատենք մի շարք երկրների իրական և «վերահաշվարկված» տնտեսական աճը 2006-2007 թթ. (2005=100)

ԵՐԿՐՆԵՐ	փաստացի	$, ԳՀ
ԱՄՆ	104,9	110,8
Ֆրանսիա	104,3	112,4
Ճապոնիա	104,4	107,6
Չինաստան	126,1	80,5
Հնդկաստան	117,0	82,0
Թուրքիա	111,9	158,0
Ռուսաստան	116,4	134,5
Ղազախստան	120,5	141,4
Ուկրաինա	115,8	99,7
Հայաստան	128,7	114,8

Հակասական ու անտրամաբանական այդ տվյալները թույլ են տալիս անել հետևյալ եզրակացությունները:

1. Վիճակագրական «խաղերին» չեն մասնակցում միայն Միացյալ Նահանգները: Այդ գերհզոր երկրի ՀՆԱ-ի ազգային գնահատականը ՄԱԿ-ի բոլոր զեկույցներում մնում է անփոփոխ: Տվյալ պարագայում երկու ցուցանիշների տարբերությունը (110,8/104,9=5,6%) պայմանավորված է 2 տարվա ընթացքում (2006-2007 թթ.) դոլարի արժեզրկմամբ:

2. «Վերահաշվարկված» տվյալներով, 182 երկրների ՀՆԱ-ն ավելացել է 4,3 տրիլիոն դոլարով, որից 3,4 տրիլիոն դոլարը՝ գների աճի հաշվին: Այլ կերպ՝ համաշխարհային տնտեսությունը, նշված երկու տարիներին, փաստորեն չի զարգացել և հայտնվել է լճացման իրավիճակում: Իրականում 2006-2007 թթ. համաշխարհային տնտեսությունը դեռևս վերելք էր ապրում:

3. «Վերահաշվարկման» արդյունքում 182 երկրներից 70-ը հայտնվել են ավելի վատ վիճակում, քան ներկայացվել են նախորդ զեկույցներում: Հակառակը, 60 երկրներ (հատկապես նավթ արդյունահանող) բարելավել են իրենց ՀՆԱ-ն մինչև 50 % և նույնիսկ 2 անգամ: Աղյուսակում նշված 9 երկրներից (չհաշված ԱՄՆ-ը) վիճակագրական «խաղերում» շահել են Ֆրանսիան, Ռուսաստանը, Ղազախստանը և հատկապես Թուրքիան: Մնացած 5 պետությունները (Ճապոնիա, Չինաստան, Հնդկաստան, Ուկրաինա, Հայաստան) հայտնվել են տուժողների ցանկում:

4. Բոլոր հաշվարկները և հաշվետվություններն այն մասին, որ աշխարհի տնտեսական կենտրոնն Արևմուտքից փոխադրվում է Արևելք, հիմնավորված չեն: «Վերահաշվարկված» տվյալներով, Արևելյան և Հարավային Ասիայի (ներառյալ խաղաղօվկիանոսյան տարածաշրջանը) բաժինը ՀՀԱ-ում 2005 թ. կազմել է 29,8, իսկ 2007 թ.՝ 24,3%: Չինաստանի և Հնդկաստանի տեսակարար կշիռը ՀՀԱ-ում 2006 թ. գնահատվել է 21,4, իսկ 2007 թ.՝ 15,7 %: Վիճակագրական «խաղերում» ՉԺՀ-ն կորցրել է 4,6 տրիլիոն դոլար, իսկ Հնդկաստանը՝ 1,6 տրիլիոն դոլար (երկու տարում, տնտեսական իրական աճի համեմատությամբ):

5. Թուրքիան նավթարտադրող երկիր չէ և անհասկանալի է, թե ինչ «չհաշվարկված» գործոնների հաշվին է նրա ՀՆԱ-ն երկու տարում ավելացել գրեթե 60 %-ով, այն դեպքում, երբ արաբական 20 երկրներինը՝ 19,3 %-ով (ԱՄՆ դոլար, ԳՀ-ով): Տնտեսական հզորությամբ (ՀՆԱ-ով) Թուրքիան 2005 թ. զիջել է ՉԺՀ-ին 14,5, իսկ Հնդկաստանին՝ 6,2, մինչդեռ 2007 թ. համապատասխանաբար՝ 7,4 և 3,2 անգամ: Առեղծված է դառնում այն հարցը, թե ինչպես կարող է մի երկիր, զարգանալով 2 անգամ դանդաղ տեմպերով, 2 տարվա մեջ դառնալ 2 անգամ ավելի հարուստ ու բարեկեցիկ:

6. Զեկույցում նշվում է, որ շատ աղքատ երկրնե-

րում «իջեցված վերանայումը կազմել է ոչ պակաս, քան 50 %»: Արդյունքում Աֆրիկայի երկրների մեծ մասը հայտնվեց աներևակայելի աղքատության մեջ, քան նրանք ներկայացվել են 1997 և 1998 թթ. ՄԱԿ-ի զեկույցներում: Այսպես, եթե հիմք ընդունենք այդ թվականների ԱՄՆ-ի դոլարի գնողունակությունը, ապա հետագա 10 տարիներին Հնդկաստանի բնակչության կենսամակարդակը չի բարձրացել, չնայած ՀՆԱ-ի միջին տարեկան հավելաճը կազմել է 7-8 %: 160 մլն. բնակչությամբ Բանգլադեշը դարձել է աղքատ 36 %-ով, իսկ Հայիթին (10 մլն. մարդ)՝ 42 %-ով (օրական մեկ շնչի հաշվով՝ 2,2 դոլար, 1998 թ. գներով): Այդ նույն վիճակում են հայտնվել Աֆրիկայի 12 երկրներ՝ 204 մլն. բնակչությամբ: Օրինակ, Կոնգոն (Դեմոկ. Հանր.) 62,5 մլն. բնակչությամբ 1998 թ. դեռևս կարող էր իր գոյությունը մի կերպ քարշ տալ, ունենալով մեկ շնչի հաշվով 2,3 դոլար ՀՆԱ: Համադրելի գներով նույն ցուցանիշը 2007 թ. օրական կազմել է 60 ցենտ: Պարզ է, որ նման անհեթեթ ցուցանիշները բացառվում են:

<u>ՄԱԿ-ն ընդդեմ ՄԱԿ-ի</u>

Վիճակագրությունը ճշգրիտ գիտություն է, իր հաշվարկներում կարող է թույլ տալ շեղումներ 5 %-ի սահմաններում: Հակառակ պարագայում իրականությունը ներկայացվում է ծուռ հայելու մեջ, վիճակագրությունը դադարում է վստահելի գործիք լինելուց:

Մինչդեռ ՄԱԿ-ի «զանգվածային վերահաշվարկումները» համաշխարհային տնտեսությունում տարբեր երկրների դիրքն ու տեղը որոշելու գործընթացում առաջացրել են կատարյալ խառնաշփոթություն և անվստահություն ՀԲ-ի փորձագետների անկանխակալ գնահատականների և արհեստավարժության նկատմամբ: Ավելին, չկա ոչ մի երաշխիք, որ հաջորդ զեկույցներում նոր անակնկալ ու անհեթեթ թվեր չեն հրամցվի:

Մի պահ ընդունենք, որ նախորդ զեկույցներում ՀՆԱ-ի հաշվարկների հեղինակները եղել են ոչ բանիմաց վերլուծաբաններ և նրանց տանջալի աշխատանքի արդյունքը պետք է նետել աղբանոց: Քանի որ տարբեր երկրների տնտեսական զարգացման տեմպերը հարցականի տակ չեն դրվում, ապա փորձենք հետադարձ հաշվարկներ կատարել, ընդունելով 2007 թ. գնահատականները ճշմարտացի:

Բնակչության 1 շնչին ընկնող ՀՆԱ-ի փոփոխությունը 10 տարում (1998-2007 թթ.) հետադարձ (ռեգրեսիվ) և առաջընթաց (պրոգրեսիվ) հաշվարկներով

ԱՄՆ=100 (ԱՄՆ դոլար, ԳՀ-ով)

ԵՐԿՐՆԵՐ	Ռեգրեսիվ		Պրոգրեսիվ	
	1997	2007	1997	2007
Հայաստան	5,1	11,7	9,3	21,3
Ադրբեջան	5,4	17,2	5,3	16,7
Վրաստան	5,3	10,2	6,8	13,2
Ռուսաստան	21,1	32,2	15,1	23,2
Ղազախստան	12,8	23,8	12,3	22,8
Ուկրաինա	8,5	15,2	7,5	13,4
Թուրքիա	27,9	28,4	21,9	22,3
Չինաստան	6,1	11,8	10,9	20,9

Աղյուսակի տվյալներից պարզ երևում է, որ ՄԱԿ-ի փորձագետների հաշվարկներում Հայաստանի բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն (ԳՀ, ԱՄՆ դոլար) 1997 թ. «գերագնահատվել» է 45 %-ով, Չինաստանինը՝ 44, Վրաստանինը՝ 23 %-ով, մինչդեռ Ռուսաստանի ՀՆԱ-ն «թերագնահատվել» է 39 %-ով, Թուրքիայինը՝ 27 %-ով: Մնացած երկրը-

ների (Ադրբեջան, Ղազախստան, Ուկրաինա) երկու մեթոդով կատարած գնահատականները գրեթե համընկնում են:

Եթե փորձենք նման հետադարձ հաշվարկ կատարել, ապա կստանանք ավելի անհեթեթ ու հակասական տվյալներ հիշյալ և աշխարհի բոլոր երկրների տնտեսության գրված դիրքի և բնակչության կենսամակարդակի վերաբերյալ: Օրինակ, Հայաստանի դիրքն ԱՄՆ-ի ՀՆԱ-ի նկատմամբ (բնակչության մեկ շնչի հաշվով, ԳՀ-ով) 1987 թ. կկազմի ոչ թե 25,4, այլ 14 %, Չինաստանինը՝ ոչ թե 6,3, այլ 3,3 %, այսինքն՝ մոտ 7 անգամ պակաս, քան գնահատել են ՀԲ-ի ու ՄԱԿ-ի առաջին փորձագետները, Փենսիլվանիայի համալսարանի գիտական կենտրոնը:

Դատելով ՄԱԿ-ի հետադարձ հաշվարկների տվյալներով, զարգացող երկրների բնակչության զգալի մասը պետք է սովամահ լիներ: Առաջին հերթին դա վերաբերում է Հնդկաստանին, Չինաստանին, Բանգլադեշին, Ինդոնեզիային, Տրոպիկական Աֆրիկայի երկրներին, որոնց ՀՆԱ-ի «վերահաշվարկված» տվյալներով, նույնիսկ 2007 թ. բնակչության առնվազն 50 %-ի օրական սպառումը չի գերազանցում 2 դոլարը:

Ավելին, ՄԱԿ-ն իր իսկ «հաշվարկներով» ի չիք է դարձնում «Հազարամյակի հռչակագրում» առաջադրված նպատակները, առաջին հերթին ծայրահեղ աղքատությունը մինչև 2015 թ. 2 անգամ կրճատելու հիմնախնդիրը: Ակնհայտ է նաև այն փաստը, որ դոլարի ժամանակակից գնողունակության պայմաններում ծայրահեղ աղքատ են դառնում նրանք, ովքեր 2 դոլարից պակաս օրական եկամուտ ունեն:

ՀՀ ԱՎԾ-ի և ՀԲ-ի վիճակագրական վերլուծական զեկույցներում նշվում է, որ մեր հանրապետությունում աղքատության մակարդակը 1998/99-ից մինչև 2008 թվականը ներառյալ կրճատվել է 2,4 անգամ: Ընդ որում բնակչության միայն 3,9 %-ն է, որ 2008 թ. դրությամբ օրական սպառել է 2,15 դոլարից պակաս նյութական ու հոգևոր բարիքներ (ԱՄՆ դոլարի 2005 թ. գնողունակության համարժեքով, 1$=178,6 դր.): Հասկանալի է, որ առանց տնտեսության զարգացման բարձր տեմպերի, նման ցուցանիշներ չէին արձանագրվի տնային տնտեսությունների հետազոտությունների արդյունքում:

Ոչինչ հավերժական չէ: Վերջին 20 տարիներին տեղի են ունեցել արմատական սոցիալ-տնտեսական փոփոխություններ, ուժեղացել է տնտեսական անհամաչափ զարգացումը, հանդես են եկել հազարավոր ապրանքների ու ծառայությունների նոր տեսակներ, էլ ավելի են խճճվել միջպետական ֆինանսատնտեսական կապերը, սրվել են գլոբալ հիմնախնդիրները, սպառնալով մարդկության բուն գոյատևմանը: Ֆինանսները հիմնովին անջատվել են տնտեսության իրական ոլորտից, առաջացնելով գլոբալ ֆինանսատնտեսական ճգնաժամեր:

Բավական է նշել, որ 1990-2004 թթ. բաժնետոմսերի արժեքը 9,4 տրիլիոն դոլարից հասել է 50,8 տրիլիոն դոլարի, գերազանցելով ՀՆԱ-ի աճը 4 անգամ: Համաշխարհային ֆինանսական շուկաներում 2008 թ. օգոստոսի դրությամբ շրջանառության մեջ պտտվում էին շուրջ 100 տրիլիոն դոլարի տարբեր տեսակի արժեթղթեր: Նույնքան էլ կազմում էր ԱՄՆ-ի ներքին ու արտաքին պարտքը: ԱՄՆ-ի բնակչության գերակշռող մասն ապրում է պարտքով: Այստեղ ներգաղթողների միջին տարեկան թիվն անցնում է 1 մլն. մարդուց, որոնց միայն բնակարանային պահանջը բավարարելու համար անհրաժեշտ է կառուցել 30-40 մլն. քառակուսի մետր



Source: Indicator table H of the Human Development Report 2009

օգտակար տարածքով բնակելի շենքեր: Նույնիսկ տարեկան 60-70 հազար դոլար վաստակող անձը 30 տարում հազիվ կարող է բնակարանի տեր դառնալ:

ԱՄՆ-ի ՀՆԱ-ի (2007 թ.՝ մոտ 13,8 տրիլիոն) միայն 3 տրիլիոն դոլարն է ներկայացնում տնտեսության իրական հատվածը: Մնացածը (գրեթե 80%-ը) կազմում է ծառայության ոլորտը, որի մի զգալի մասը (3 տրիլիոն դոլար) բազմաթիվ անգամ կրկնվող ֆինանսական սպեկուլյատիվ գործարքները և այլ վիրտուալ (կեղծ) ծառայություններն են, որոնք բացակայում են այլ, հատկապես զարգացող երկրներում, կամ ՀՆԱ-ի մեջ չեն ներառվում: Դոլարի արժեզրկման, էներգակիրների գների թռիչքի հետևանքով տեղի է ունենում ՀՀԱ-ի աննախադեպ վերաբաշխում հօգուտ ԱՄՆ-ի և նավթարդյունահանող երկրների:

Աշխարհի աղքատ երկրներում գերակշռում են բնատնտեսությունը, բարտերային փոխանակումները, որոնք անտեսվում են ՀՆԱ-ի միջազգային հաշվարկների ու համեմատությունների ժամանակ: Չինաստանում բացակայում է ֆինանսական փուչիկը և շատ ուռճացված ու թանկարժեք, հաճախ էլ այլասերող ծառայությունները: Երկրի ՀՆԱ-ի 60 %-ը կազմում է տնտեսության իրական հատվածը: ՉԺՀ-ն դարձել է աշխարհի ֆաբրիկա, արդյունաբերական շատ արտադրատեսակների թողարկման առաջատար երկիրը, հանդիսանալով աշխարհի ամենախոշոր ոսկեարժութային հիմնադրամի կենտրոնը:

Երկրագնդի բնակչության մոտ 38 %-ը բնակվում է Չինաստանում և Հնդկաստանում: Չնայած սուղ հողային ռեսուրսներին, այդ երկու երկրների գյուղատնտեսությունն ապահովում է աշխարհի պարենի արտադրության գրեթե 38%-ը: Մինչդեռ «վերահաշվարկումների» արդյունքում նրանց մեկ շնչի ՀՆԱ-ն իջեցվել է 2 անգամ: Այժմ մենք պետք է հավատանք, որ Չինաստանի այդ ցուցանիշը միջին համաշխարհային մակարդակից ցածր է մոտ 2, իսկ Հնդկաստանինը՝ 4 անգամ:

Ենթադրենք՝ ինչ-որ հրաշքով հաջողվում է ճշգրիտ որոշել աշխարհի 200 երկրների տնտեսական հզորությունը: Այդ դեպքում հիմնարար հարց է առաջանում. ինչպե՞ս է բաշխվում և օգտագործվում առանձին երկրների ՀՆԱ-ն: Գուցե երկրի հարստությունը կենտրոնանում է մի քանի տասնյակ միլիարդատերերի ձեռքո՞ւմ:

ՄԱԿ-ն իր զեկույցներում հաճախ է նշում, որ գնալով աշխարհի հարստությունը և եկամուտները ավելի ու ավելի են կենտրոնանում առանձին մարդկանց, անդրազգային ընկերությունների, պետությունների ձեռքում:

Ժամանակակից հասարակությունում միջին ցուցանիշների տակ թաքնված է եկամուտների խիստ անհավասար բաշխումը: Գործազրկությունը, սոցիալական լարվածությունը նույնիսկ բարձր կենսամակարդակ ունեցող երկրներում սպառնալի բնույթ են ստացել: Հասարակության անդամներին առաջին հերթին հետաքրքրում է արդարության երաշխիքը: Մինչդեռ ՄԶՀ-ն իր մեջ չի ներառում սոցիալական այդ հիմնախնդիրները: Հատկապես դա վերաբերում է բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ին, որը չի արտացոլում կյանքի պայմաններն ու որակը, ստեղծելով կատարյալ խառնաշփոթություն միջազգային տնտեսական համեմատություններում:

Մեր կարծիքով, տարբեր երկրների կենսամակարդակը համադրելու համար առավել հուսալի ցուցանիշներ են հանդիսանում բնակչության մեկ շնչին ընկնող եկամուտները (դրամական և ոչ դրամական), իսկ ավելի ճիշտ՝ տնային տնտեսությունների ծախսերը, դրանց կառուցվածքը և տարբերությունները (Ջինիի գործակիցը):

Ինչ վերաբերում է տարբեր երկրների տնտեսական հզորության համադրմանը, ապա դրա հիմքում պետք է դրվեն տնտեսական զարգացման իրական տեմպերը: Ի վերջո, դրանցով են բնորոշվում համաշխարհային տնտեսության իրավիճակը, ճգնաժամից դուրս գալու առանձին երկրների գնահատականները: Տարբեր երկրների դիրքը ՀՀԱ-ում որոշելու համար հիմք կարող են ծառայել, ասենք, 1980 թ. «միջազգային դոլարով» կատարված հաշվարկները: Այլապես, ամեն անգամ «վերահաշվարկները» նորանոր անհեթեթ թվեր կարող են հրամցնել:

Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին ՀՅԴ օրինագիծ

Ռուզան Առաքելյան

Խորհրդային Սոցիալիստական մեծ երկրի քաղաքական ղեկավարությանը չէր տեղավորվում առանձին հանրապետությունների սահմանների գաղափարը: Իրականում կար Խորհրդային Միություն՝ ուրվագծված սահմաններով: Անկախության հռչակումից հետո ենթադրվում էր, թե ամենակարևոր որոշումը կամ օրենքը, որ պիտի ընդունվեր, մեր հայրենիքի սահմանների անշեռնմխելիությանն էր վերաբերելու: Չէ՞ որ ազգային անվտանգություն ասվածը նախ պայմանավորված է երկրի սահմանների պաշտպանվածությամբ: Վերջապահ ենք, այս ամենը տեսականորեն իմացել են թե՛ օրենսդիր, թե՛ գործադիր իշխանության ներկայացուցիչները: Սակայն, գործնական իմաստով մինչ օրս որևէ քայլ չի արվել: Մեր խորին համոզմամբ, թեև ուշացած, օրվա հրամայական է ունենալ օրենք, որով պաշտպանված կլինեն ոչ միայն մեր երկրի սահման-

ները, այլ ընդհանրապես ազգային անվտանգությունը: Ըստ ՀՅԴ ֆրակցիայի առաջարկած օրենքի՝ Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա իրավաբանական անձինք և օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք, ինչպես նաև միջազգային կազմակերպությունները, չեն կարող հողի նկատմամբ ունենալ սեփականության իրավունք: Նրանք կարող են լինել միայն հողն օգտագործողներ: Բացառություն են կազմում միայն Հայաստանի Հանրապետության կացության հատուկ կարգավիճակ ունեցող անձինք:

Իսկ օրենսգրքի 102-րդ հոդվածում ավելացված 10-րդ կետը բովանդակում է մեր նպատակի հիմնավորումը՝ հողերի օգտագործումը վտանգում է պետության և հասարակության անվտանգության և սահմանամերձ բնակավայրերի զարգացման համապետական կամ համայնքային կարևոր նշանակություն ունեցող ծրագրերի իրականացման ապահովումը:

Երբ մեր ֆրակցիան նախաձեռնեց Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին օրինագծի ստեղծումը, ուսումնասիրեցինք նախ մեր հարևան երկրների համանման օրենքները, և պարզվեց՝ դրանք բոլորն ունեն իրենց երկրի սահմանների անվտանգությունը պահպանող ու երաշխավորող օրենքներ: Օրինակ, մեր հարևան Իրանի Հանրապետության նմանատիպ օրենքով արգելված է սահմանային շրջանում հողի վաճառքը, իսկ երկրի մնացած մասերում որևէ հողային տարածքի կամ որևէ կառույցի վաճառքը, որը կարող է ազգային անվտանգության խնդիր հարուցել, հանձնված է Արտաքին գործերի նախարարությանը: Նմանատիպ օրենք այսօր գործում է թե՛ Թուրքիայում, թե՛ Ադրբեջանում, թե՛ Սիրիայում: Մեր ընդդիմախոսներից շատերը, վկայակոչելով Եվրոխորհրդին մեր անդամակցելը, ուզում էին իմանալ, թե կա՞ն եվրոպական երկրներ, որոնք ունեն նման



օրենք: Մեր ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ, այո, եվրոպական շատ երկրներ նույնպես ունեն նմանատիպ օրենք:

Անվտանգության ապահովումը երբեք և երբևէ չի հակասել որևէ երկրի ազատական գաղափարախոսությանը: ԱՄՆ-ի նման ազատական գաղափարախոսություն ունեցող երկիրը նույնպես ունի երկրի անվտանգությունն երաշխավորող օրենքներ: Օրինակ՝ նրանք ոչ մի գնով չհամաձայնեցին իրենց նավահանգիստները վաճառել:

Մենք պարտավոր ենք քաղաքակիրթ լինելով, ազգային լինել: Մենք պարտավոր ենք աշխարհի առջև բաց լինել, բայց և պարտավոր ենք անշեռնմխելի պահել մեր հայրենիքի սահմանները: Որպեսզի մի օր չկանգնենք այլևս ուշացած ու անլուծելի փաստի առջև: Ինչպես պատահեց Պաղեստին պետության հետ: Երբ Իսրայելը հռչակվեց անկախ պետություն, հրեաների առաջին քայլերից մեկը Պաղեստինի սահմանային հատվածում հողերի գնումն էր: Մի քանի տարի հետո պաղեստինցիներ-ը կանգնեցին լրջագույն փաստի առջև. նրանց սահմանների զգալի մասը այլևս հրեաների սեփականություն էր: Մեր օրինագիծը դեռևս քննարկման փուլում է, և որևէ կանխատեսում չանելով հանդերձ, համոզված եմ, որ եթե ոչ այսօր, ապա երբևէ նման օրենք ընդունելու անհրաժեշտության առջև ենք կանգնելու:

ՀՅԴ – ՌԿ(Բ)Կ Ռիգայի 1921 թ. բանակցությունների հարցի շուրջ

Արարատ Հակոբյան

Հայտնի է, որ Խորհրդային Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի մերձեցումն ու համագործակցությունը իրավապայմանագրային ձևակերպում ստացավ Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ի պայմանագրով, որը Հայաստանի հաշվին նշանակալի տարածքային զիջումներ և ռազմաֆինանսական ու դիվանագիտական օգնություն ապահովեց Թուրքիային: Այդ փաստաթղթի ընդունումից հետո նախատեսվում էր, որ թուրքական պատվիրակությունը վերադարձի ճանապարհին կանգ կառնի Թիֆլիսում և Մոսկվայի պայմանագրի 15-րդ հոդվածի պահանջների ոգով, ապրիլ ամսին, համապատասխան համաձայնագրեր կկնքի անդրկովկասյան հանրապետությունների հետ:

Սակայն, գալով Անդրկովկաս, պատվիրակության ղեկավար Յու. Քեմալ բեյը անսպասելիորեն հայտարարեց, որ թուրքական կողմը չունի Հայաստանի հետ պայմանագիր կնքելու լիազորություն՝ դրանով իսկ ակնարկելով, որ իրենք արդեն ստորագրել են նման փաստաթուղթ: Յ. Քեմալը, անկասկած, նկատի ուներ Ալեքսանդրապոլի 1920 թ. դեկտեմբերի 2-ի հաշտության պայմանագիրը: Մինչդեռ խոսքը վերաբերում էր մի ժամանակավրեպ փաստաթղթի, որը չէր ճանաչվել և վավերացվել անգամ Թուրքիայի կողմից[1]: Միաժամանակ, թուրքերը սկսեցին սակարկել թուրք-անդրկովկասյան կոնֆերանսի (խորհրդաժողով) ձևաչափի, հրավիրման վայրի, ժամկետի և այլ հարցերի շուրջ, ուստի այդ կոնֆերանսի հրավիրումը ձգձգվեց:

Եվ, ահա, նման պայմաններում, խորհրդային պետության ղեկավարությունը թուրք-անդրկովկասյան կոնֆերանսի հրավիրումը ձգձգելու և Արևմուտքի ու Ռուսաս-

[1] Տե՛ս Документы внешней политики СССР, т. 4, М., 1960, с. 706.

տանի միջև երկակի խաղերի դիմելու քեմալականների փորձերը հակակշռելու համար, որոշեց ընդառաջ գնալ ՀՅԴ արտասահմանի պատասխանատու մարմնի առաջարկությանը ու Ռիգայում նրա հետ բանակցություններ սկսել իբր ՀՅԴ-ՌԿ(բ)Կ միջկուսակցական հարաբերությունների կարգավորման, Հայաստանի քաղաքական վիճակի բարելավման և անգամ՝ հայկական հարցի լուծման շուրջ:

Մինչօրս հայ պատմագրության մեջ Ռիգայի կոնֆերանսի հրավիրման շարժառիթները դիտարկվել են սոսկ իբրեւ ՌԿ(բ)Կ-ի և խորհրդային պետության կողմից Զանգեզուրի խորհրդայնացումը դյուրացնելու ու արագացնելու մարտավարական քայլ: Մինչդեռ, խորքային ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ՀՅԴ-ի հետ բանակցելով, խորհրդային կողմը միաժամանակ հետապնդել է նաև քեմալական Թուրքիային զգաստացնելու մտադրություն: Մարտավարական հաշվարկներով ձեռնարկված ՌԿ(բ)Կ բանակցությունները ոչ բարեկամ ՀՅԴ-ի հետ, անշուշտ, անհանգստացրին թուրքերին, քանզի նրանց թվում էր, թե Ռուսաստանը կարող է ընդառաջ գնալ հայերին ու, կոշտացնելով իր մոտեցումները, առաջադրել հողային պահանջներ: Բանակցությունների շարժառիթնե-

Վահան Փափազյան

ից մեկն էլ կարելի է համարել այն փաստը, որ Անտանտի երկրների Լոնդոնի (1921թ. փետրվար-մարտ) խորհրդաժողովից հետո առաջին պլան էր մղվել թուրքական և դրա հետ կապված՝ հայկական հարցը: Խորհրդային կողմը ցանկանում էր դաշնակցականների հետ բանակցություններ վարելու պատրանք ստեղծելով՝ ձախողել նաև այդ ծրագրերը:

Ռիգայի ՀՅԴ-ՌԿ(բ)Կ բանակցությունների սկիզբը դրվեց այն բանից հետո, երբ 1921 թ. մայիսի 26-ին Բեռլինից Մոսկվա՝ ՌԿ(բ)Կ ԿԿ-ին նամակով դիմեց ՀՅԴ արտասահմանի պատասխանատու մարմնի ներկայացուցիչ Վահան Փափազյանը: Նա առաջարկում էր բանակցություններ սկսել երկու կուսակցությունների միջև՝ միմյանց փոխհարաբերությունները ճըշտելու, Հայաստանի անկախությունը պահպանելու, Զանգեզուրի խնդիրը խաղաղ կարգավորելու և այլ հարցերի շուրջ[2]:

ՌԿ(բ)Կ ԿԿ քաղբյուրոն իր հունիսի 8 (10)-ի նիստում լսում է «Դաշնակցականների հետ բանակցությունների մասին» հարցը և որոշում դրանց անցկացման վայր նշանակել Լատվիայի մայրաքաղաք Ռիգան[3]: Զարմանալի չէր, որ ՀՅԴ հետ բանակցություններ վարելու գաղափարին դեմ արտահայտվեցին ՀՍԽՀ կառավարությունը և ՀԿ(բ)Կ ԿԿ-ն: Մոսկվայում Խորհրդային Հայաստանի լիազոր ներկայացուցիչ Ս. Տեր-Գաբրիելյանը Հայաստանի ղեկավարությանը՝ Ալ. Մյասնիկյանին, Ս. Լուկաշինին, Ա. Մռավյանին, 1921 թ. հունիսի 15-ին Երևան ուղարկած ծածկագիր հեռագրով տեղեկացնում էր, որ Բեռլինում գտնվող դաշնակցականների Արտասահմանի պատասխանատու մարմինը առաջարկել է ՌԿ(բ)Կ ԿԿ-ին բանակցել Հայաստանի խնդիրների շուրջ[4]: Ինքը՝ Ս. Տեր-Գաբրիելյանը անթույլատրելի էր համարում բանակցու-

[2] Տե՛ս Խաչատրյան Կ., Հայ-ռուսական հարաբերությունները 1920-1922 թթ., Ե., 2007, էջ 100:

[3] Տե՛ս Политбюро ЦК РКП (б) – В КП (б), Повестки дня заседаний. Каталог, т. I, 1919–1929, М., 2000, с.106-107.

[4] Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 4010, ց. 1, գ. 3, թ. 1:

թյունները ՀՅԴ արտասահմանի պատասխանատու մարմնի հետ:

1921 թ. հունիսի 22-ին Մոսկվա՝ Ս. Տեր-Գաբրիելյանին և ՌԿ(բ)Կ ԿԿ ուղղված հեռագրում Հայաստանի Ժողկոմխորհի նախագահ Ալ. Մյասնիկյանը ոչ միայն անթույլատրելի էր համարում Հայաստանի ներկայացուցչի մասնակցությունը բանակցություններին, այլև գտնում, որ հարկավոր է անպատասխան թողնել մայիսի 26-ի Վ. Փափազյանի դիմումը, քանզի «Զանգեզուրի հարցն այսուհետ կլուծվի պատերազմով»[5]:

ՌԿ(բ)Կ ԿԿ քաղբյուրոն 1921 թ. հունիսի 25-ին դարձյալ լսում է ՀՅԴ հետ բանակցությունների մասին հարցը և որոշում «ուժի մեջ թողնել նախորդ որոշումը»[6]: Խորհրդային կողմը կազմեց պատվիրակություն, որը գլխավորում էր Բեռլինում Ռուսաստանի ներկայացուցիչ Ա. Իոֆեն, անդամներն էին՝ Ս. Տեր-Գաբրիելյանը և Վ. Տեր-Վահանյանը[7]: ՀՅԴ արտասահմանի պատասխանատու մարմնի կողմից լիազորված էին Ա. Ջամալյանը (Իսահակյան), Վ. Նավասարդյանը և Վ. Փափազյանը (Կոմս)[8]: Բանակցությունները սկսվում են 1921 թ. հուլիսի 8-ին, և ՀՅԴ պատվիրակները ներկայացնում են ստեղծված քաղաքական ծանր իրավիճակը՝ ռուս-

Սահակ Տեր-Գաբրիելյան

թուրքական զինակցության հետևանքով Հայաստանի բռնի գրավման և խորհրդայնացման, թուրքերի երկդիմի քաղաքականության և Ռուսաստանի կողմից հայկական հարցին հասցված հարվածի փաստերը և դրանց հաղթահարմանն ուղղված հետևյալ նախնական առաջարկները.

«1. Դատարկել Հայաստանը բոլշևիկյան ուժերեն և վերականգնել նախկին պետական կարգերը: Հայաստանը կդառնա հավատարիմ դաշնակիցը Ռուսաստանին:

2. Ջանալ թուրքերից ձեռք բերել թրքահայկական որոշ հողեր, դուրս մնացած մոտ կես միլիոն թրքահայությունը տեղավորելու համար:

3. Առաջքը առնել Քեմալի վտանգին, որովհետև այս վերջինը, համայնավարությանը շահագործելե ետք, պիտի հեռանա անկե:

4. Պարտադրել Վրաստանի և Թուրքիո՝ թույլ տալ Հայաստանին երկաթուղագիծ անցընելու մինչև Սև ծով»[9]:

Խորհրդաժողովին մասնակից հայ պատվիրակների հուշագրական վկայություններից երևում է, որ սկզբում փորձառու դիվանագետ Ա. Իոֆեն կոշտ դիրք է գրավել Հայաստանի հարցում, սակայն հետագայում հայ ներկայացուցիչների կողմից խնդրի ներկայացման ու քննարկումների ընթացքում, դարձել է ավելի բարյացակամ ու զիջող:

Երբ Կարմիր բանակը կռիվներով մուտք գործեց Զանգեզուր և լուծվեց երկրամասի խորհրդայնացման հարցը, ՀՅԴ արտասահմանի ՊՄ-ն (Վ. Փափազյանի, Ա. Ջամալյանի և Վ. Նավասարդյանի ստորագրությամբ) հուլիսի 13-ին, Ռուսաստանի պատվիրակության ղեկավար Ա. Իոֆեի միջոցով, ուշացած հեռագիր է ուղարկում ՌԿ(բ)Կ ԿԿ-ին՝

---

[5] Հ.Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), կազմող և խմբագիր Վլ. Ղազախեցյան, Ե., էջ 63-64, նաև՝ Խաչատրյան Կ., նշվ. աշխ., էջ100:

[6] Геноцид армян (документы и комментарии), сост. проф. Ю. Г. Барсегов, т. 2, ч. 1, М., 2003, с. 509.

[7] Տե՛ս նույն տեղում, էջ 506:

[8] Տե՛ս Լազյան Գ., Հայաստանը և հայ դատը, Ե., 1991, էջ 310:

[9] Տե՛ս Քիւրքճեան Հ., Ուրուագիծ Հ.Յ.Դ. պատմութեան 1919-1924 հնգամեակի, Աթենք, 1988, էջ 61:

կոչ անելով վերջ տալ անիմաստ արյունահեղությանը և երաշխավորել հայ ժողովրդի անվտանգությունն ու ինքնիշխանությունը[10]: Հաջորդ օրը՝ 1921 թ. հուլիսի 14-ին, ՌԿ(բ)Կ ԿԿ-ի պատվիրակությունը, հանձինս Ա. Իոֆեի, պատասխանում է, որ ՌԽՖՍՀ կառավարությունը երաշխավորում է Հայաստանի անկախությունը և ինքնուրույնությունը, ինչպես նաև հնարավոր է համարում իր ուժերի սահմաններում ազդելու Թուրքիայի վրա, որպեսզի Թուրքահայաստանի տարածքները միացվեն Ռուսահայաստանին[11]:

Քանի որ Ռիգայի բանակցությունները ուղղակիորեն շոշափում էին Թուրքիայի շահերը, ապա հետաքրքիր է պարզել, թե 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի պայմանագրի համաձայն, ռուսական կողմը տեղյա՞կ է պահել թուրքերին այդ բանակցությունների մասին: Քանզի, եթե տեղյակ չի պահել, ուրեմն դա պայմանագրի խախտում էր: Սակայն չպետք է անտեսել, որ Ռիգայում բանակցել են կուսակցական մարմինները և ոչ թե կառավարությունները:

Ինչևէ, մեկ շաբաթ տևած միջկուսակցական բանակցությունների արդյունքում, որոշ խմբագրումներից հետո, 1921 թ. հուլիսի 14-ին, Ռիգայի խորհրդային դեսպանատան մեջ նախաստորագրվեց հայկական կողմի համար բավականին նպաստավոր համաձայնագիր, որն ուներ հետևյալ կետերը.

ա) ՌԿ(բ)Կ-ն ճանաչում էր Հայաստանի անկախությունը և պարտավորվում էր ներազդել ՌԽՖՍՀ կառավարության վրա՝ Հայաստանի հետ հարաբերությունները կառուցելիս առաջնորդվել վերջինիս ինքնիշխանությունը ճանաչելու սկզբունքով:

բ) ՌԿ(բ)Կ-ն ընդունում էր, որ հայկական հարցը կարելի է համարել լուծված, երբ Հայաստանի տարածքները կմիավորվեն:

գ) ՌԿ(բ)Կ-ն խոստանում էր անգամ, որ չի առարկի հայկական հարցի լուծումից հետո Հայաստանի ապախորհրդայնացմանը:

դ) ՀՅԴ-ն իր հերթին գտնում էր, որ երբ լուծվի հայկական հարցը, Հայաստանը կընտրի ռուսական կողմնորոշում[12]:

Համաձայնագրի ստորագրումից հետո ՀՅԴ բանագնացները շարունակեցին մնալ Ռիգայում՝ սպասելով Մոսկվայի կողմից այդ փաստաթղթի վավերացմանը: Ի դեպ, հարկ է նշել, որ ՌԿ(բ)Կ պատվիրակ Ս. Տեր-Գաբրիելյանը, Ռիգայից մեկնելուց առաջ, Վ. Փափազյանի հետ ունեցած զրույցում ընդգծումով է մոտեցել ՀՅԴ պատվիրակների թափած ջանքերին և խոստացել է, որ «...հասնելուն պէս, պիտի աշխատի ժամ առաջ ընդունիլ տալու թէ՛ իրենց կուսակցութեան եւ թէ՛ կառավարութեան»[13]: Ս. Տեր-Գաբրիելյանի խորհրդով անգամ նպատակահարմար է գտնվել օգտագործել Մոսկվայում գտնվող Դրոյի ազդեցությունը: Ուստի Վ. Նավասարդյանը նամակով դիմել է Դրոյին, որ նա ջանքեր թափի համաձայնագրի վավերացման ուղղությամբ[14]:

Արշակ Ջամալյան

Մյուս կողմից, նման հայանպաստ համաձայնագրի ստորագրումը որոշ անհանգստություն է առաջացնում ՌԿ(բ)Կ և խորհրդային պետության ղեկավար շրջաններում: Հենց համաձայնագրի ստորագրման օրը՝ 1921 թ. հուլիսի 14-ին,

[10] Տե՛ս Геноцид армян, т. 2, ч. 1, М., 2003, с. 514-515.

[11] Տե՛ս նույն տեղում, էջ 516:

[12] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 194, թ. 1:

[13] Վահան Փափազեան, Իմ յուշերը, հատոր երրորդ, Գահիրէ, տպարան «Յուսաբեր», 1957, էջ 227:

[14] Տես՝ Փափազեան Վ., Իմ յուշերը, հ. 3, Գահիրէ, 1957, էջ 227:

խորհրդային դիվանագետ Ա. Իոֆեն ՌԿ(բ)Կ ԿԿ-ի քարտուղար Վ. Մոլոտովին և արտգործժողկոմ Գ. Չիչերինին հասցեագրած ընդարձակ նամակում քաղաքական որոշ հիմնավորումներ էր տալիս ՀՅ Դաշնակցություն կուսակցության հետ նախաստորագրված համաձայնագրին: Ա. Իոֆեն նշում էր, որ ստանձնելով ՀՅ Դաշնակցության հետ բանակցություններ վարելու առաջարկությունը՝ ԿԿ-ի կողմից չի ստացել ո՛չ կարգադրություն և ո՛չ էլ որևէ հրահանգ: Նմանապես, իրենց հետ որևէ հրահանգ չէին բերել պատվիրակներ Ս. Տեր- Գաբրիելյանը և Վ. Տեր- Վահանյանը[15]:

Այս փաստը ինքնին վկայում է, որ այս բանակցությունները իրականում լուրջ նպատակ չէին հետապնդում, այլ սոսկ տակտիկական միջոց էին՝ ժամանակ շահելու և ինչ-որ խոստումներ տալով՝ Զանգեզուրի խորհրդայնացումը դյուրացնելու համար:

Մյուս կողմից՝ Ա. Իոֆեն իր նամակում ընդգծում էր, որ նման համաձայնագրի կնքումը հայերի հետ կունենա քարոզչական մեծ նշանակություն: Նա շեշտում էր, որ հարկավոր է լավ դաս տալ Մ. Քեմալին՝ ցույց տալու համար, որ իրենց թիկունքում քաղաքականություն վարելն անթույլատրելի է[16]: Նամակին անձամբ ծանոթացել էր

Ադոլֆ Աբրամովիչ Իոֆե

Վ. Լենինը և բնագիր տեքստի վրա կատարել նշումներ՝ ընդգծումներ, անհամաձայնության հարցական և բացականչական նշաններ[17]:

Ա. Իոֆեի նամակը ստանալուց հետո, Գ. Չիչերինը 1921 թ. հուլիսի 16-ի գրությամբ դիմում է ՌԿ(բ)Կ ԿԿ քաղբյուրո, որպեսզի Ռիգայում նախաստորագրված համաձայնագիրը անհապաղ մերժվի, քանզի այն հակասում էր Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագրին: Տեսնելով, որ հարցի քննարկումը քաղբյուրոյում ձգձգվում է, Գ. Չիչերինը հուլիսի 24-ին նամակով դիմում է Վ. Մոլոտովին՝ հարցնելով, թե ինչո՞ւ է ուշանում քաղբյուրոյի համապատասխան արձագանքը: Գ. Չիչերինը գտնում էր, որ, եթե ԿԿ-ն չդատապարտի այդ համաձայնագիրը, ապա դա խոշոր հարված կլինի Ռուսաստանի արևելյան քաղաքականությանը և լրջորեն կբարդացնի ռուս-թուրքական հարաբերությունները: Ավելին, Գ. Չիչերինը հասկանալի պատճառներով անթույլատրելի էր համարում այդ համաձայնագրի նախագծի որևէ օրինակի հայտնվելը «դաշնակների» ձեռքում[18]:

Գ. Չիչերինի ահազանգից հետո չի ուշանում ՌԿ(բ)Կ ԿԿ քաղբյուրոյի որոշումը. քաղբյուրոն իր անդամների հեռախոսային հարցման միջոցով, Վ. Մոլոտովի քարտուղարությամբ, 1921 թ. հուլիսի 26-ին որոշում է կայացնում. «Վճռականորեն մերժել ընկ. Իոֆեի՝ դաշնակների հետ Ռիգայում ստորագրած համաձայնագրի նախագիծը»[19]: Մի քանի օր անց՝ 1921 թ. հուլիսի 30-ին, ՌԿ(բ)Կ ԿԿ Կովկ. բ.-ի նախագահությունը արձագանքելով իր վերադասի՝ ՌԿ(բ)Կ ԿԿ քաղբյուրոյի որոշմանը, խնդրում էր «դադարեցնել ամեն տեսակ բանակցությունները դաշնակցության հետ»[20]:

---

[15] Տե՛ս Геноцид армян, т. 2, ч. 1, М., 2003, с. 516-517.
[16] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 191, թ. 27, նաև՝ Խաչատրյան Կ., նշվ. աշխ., էջ 104:
[17] Տե՛ս Геноцид армян, т. 2, ч. 1, М., 2003, с. 516-521.
[18] Տե՛ս նույն տեղում, էջ 521:
[19] Նույն տեղում, էջ 522:
[20] Հ.Յ.Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), պատ. խմբագիր և կազմող Վլ. Ղազախեցյան, 1999, էջ 66:

Բայց այդ խնդրանքն արդեն ավելորդ էր, որովհետև քաղբյուրոն արդեն մերժել էր Իոֆեի ստորագրած Ռիգայի համաձայնագիրը:

Սակայն, Ա. Իոֆեն Գ. Չիչերինից ստանալով քաղբյուրոյի որոշումը, 1921 թ. հուլիսի 28-ին պատասխանում է, որ ինքը այլևս չի կարող վերացնել նախաստորագրված համաձայնագրի «հետքերը», որովհետև այդ թղթից դաշնակցականների մոտ այսպես թե այնպես կհայտնվի[21]: Միաժամանակ նա դժգոհություն է հայտնում խորհրդային պետության վարած արևելյան քաղաքականությունից, որտեղ ըստ Ա. Իոֆեի՝ կարևորություն չի տրվում ճնշված ազգերի, տվյալ դեպքում՝ հայերի, ինքնորոշման իրավունքի ճանաչմանը[22]:

Ծանոթանալով Ա. Իոֆեի նամակին, Գ. Չիչերինը իր հերթին 1921 թ. հուլիսի 31-ին նամակով բողոքում է Վ. Լենինին՝ արևելյան հարցերում Ա. Իոֆեի «պարզունակ (նաիվ), գունազարդող և ռոմանտիկ հայացքների համար»[23]:

Որպեսզի Ռիգայի կոնֆերանսի արդյունքում նախաստորագրված ոչ թրքանպաստ նախագծի մասին դաշնակցականների կողմից տեղեկատվության հնարավոր արտահոսքի դեպքում մեղմվեն թուրքերի բացասական արձագանքի հետևանքները, Գ. Չիչերինը, իր հերթին, 1921 թ. օգոստոսի 3-ի նամակով խնդրում էր Վ. Լենինին, որպեսզի իրենք առաջինը արձագանքեն այդ միջադեպին: Նա գտնում էր, որ դա Ա. Իոֆեի անձնական նախաձեռնությամբ արված սխալմունք է և ընդհանուր ոչինչ չունի խորհրդային պետության արտաքին քաղաքականության հետ[24]: Վ. Լենինը 1921 թ. օգոստոսի 5-ին հեռախոսով իր համաձայնությունն է տալիս իրազեկելու Ռուսաստանում Թուրքիայի դեսպան Ալի Ֆուադին[25]: Թուրքերի կասկածները փարատվում են: Իրականում թուրքերի անհանգստության համար որևէ հիմք չկար, որովհետև Ռիգայի բանակցությունները ընդամենը քաղաքական- դիվանագիտական խաղ էին բոլշևիկների կողմից՝ Զանգեզուրի խորհրդայնացումը հեշտացնելու համար:

Գ. Չիչերին

Հենց այդպես էլ եղավ: Պատահական չէ, որ երբ 1921 թ. հուլիսի 16-ին ՀԿ(բ)Կ ԿԿ-ի քարտուղար Ս. Լուկաշինը հեռագրում է Մոսկվա «Զանգեզուրի լիկվիդացիայի» մասին, ընդամենը տասն օր անց՝ հուլիսի 26-ին ՌԿ(բ)Կ ԿԿ քաղբյուրոն չեղյալ է համարում Ռուսաստանի ներկայացուցիչ Ա. Իոֆեի կողմից հուլիսի 14-ին Ռիգայում նախաստորագրված համաձայնագիրը: Հատկանշական է նաև, որ համաձայնագրի վավերացմանը արգելք են հանդիսացել նաև Բաքվի հայ կոմունիստները[26]:

Ռիգայի բանակցությունները ուսանելի են պատմական դասերի առումով: Բոլշևիկ առաջնորդները բանակցությունների պատրանք ստեղծելով՝ մի կողմից նպատակ էին հետապնդում հեշտությամբ լուծել Զանգեզուրի խորհրդայնացման հարցը, իսկ մյուս կողմից՝ հասկացնել քեմալականներին, որ չձգձգեն թուրք-անդրկովկասյան կոնֆե-

---

[21] Տե՛ս Геноцид армян, т. 2, ч. 1, М., 2003, с. 522-523:

[22] Տե՛ս նույն տեղում, էջ 523-524:

[23] Նույն տեղում, էջ 525:

[24] Տե՛ս նույն տեղում, էջ 526:

[25] Տե՛ս նույն տեղում, էջ 527:

[26] Տե՛ս Տասնապետյան Հ., Հ.Յ. Դաշնակցությունը իր կազմությունեն մինչև Ժ. ընդհ. ժողով (1890-1924), Աթենք, 1988, էջ 162:

բանսի հրավիրումը:

Ինչ վերաբերում է Խորհրդային Հայաստանի ղեկավարությանը, ապա պետք է ասել, որ նա թե՛ Ղարաբաղի և թե՛ տարածքային- սահմանային մյուս խնդիրներում հանդես չբերեց վճռականություն և հետևողականություն: Խորհրդային Հայաստանի ղեկավարության թշնամանքն ու անհանդուրժողականությունն այնքան մեծ էր ՀՅ Դաշնակցության հանդեպ, որ և՛ Ա. Մյասնիկյանը, և՛ Ս. Լուկաշինը, և՛ Ա. Մռավյանը խոսքները մեկ արած անթույլատրելի էին համարում Ռիգայի բանակցությունները՝ չկռահելով, որ դա ընդամենը Կենտրոնի կողմից դիվանագիտական խաղ էր:

Պատմաքաղաքական դեպքերի և վավերագրի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ որոշակի կապ կա նաև Զանգեզուրի ապստամբության ճնշման ու Լեռնային Ղարաբաղի հարցը Ադրբեջանի օգտին լուծելու միջև: Ժամանակային առումով դրանք ընթացել են գրեթե միաժամանակ: Հայտնի է, որ Գ. Նժդեհի գլխավորած Լեռնահայաստանի պայքարի գործնական նպատակների մեջ էր մտնում ոչ միայն Զանգեզուրը, այլ նաև Լեռնային Ղարաբաղը Հայաստանին միացնելը: Դեռ 1921 թ. մայիսի կեսերին Սիսիանի շրջանի Ալաջուղ (Ղալաջուղ) գյուղում, Խորհրդային Հայաստանի և Լեռնահայաստանի պատվիրակությունների միջև ընթացող բանակցություններում, Նժդեհը զենքը ցած դնելու կարևոր պայման էր համարել Ղարաբաղի՝ Հայաստանի կազմում լինելը (Զանգեզուրի միացումը արդեն կասկած չէր հարուցում)[27]:

Ակներև է, որ Լեռնահայաստանը խաղաղ խորհրդայնացնելու նպատակով ձեռնարկված Ռիգայի բանակցություններին շատ նման սցենարով ընթացավ նաև ՌԿ(Բ)Կ ԿԿ Կովկասյան բյուրոյի պլենումի հունիսի 3-ի՝ «Լեռնային Ղարաբաղը Հայաստանին պատկանելու մասին» և Հայաստանի կառավարության՝ 1921 թ. հունիսի 12-ի «Լեռնային Ղարաբաղը այսուհետ ՀՍԽՀ անբաժան մաս հայտարարելու մասին» հայտարարություն-որոշումների վերանայման գործընթացը[28]: Քանի դեռ Լեռնահայաստանի դիմադրությունը հաջողությամբ շարունակվում էր, թվում էր, թե ՌԿ(Բ)Կ ղեկավարությունը տրամադիր է Լեռնային Ղարաբաղի հարցը լուծել Հայաստանի օգտին: Բայց հենց որ հունիսի վերջին և հուլիսի սկզբին Կարմիր բանակը սկսեց արագորեն հնազանդեցնել Գ. Նժդեհի գլխավորած պայքարը և խորհրդայնացնել Զանգեզուրը, բոլշևիկ ղեկավարությունը Ղարաբաղի պատկանելիության խնդրում թեքվում է Ադրբեջանի կողմը:

Մինչդեռ, Խորհրդային Հայաստանի քաղաքական ղեկավարությունը՝ Ալ. Մյասնիկյանի գլխավորությամբ, գտնելով, որ Կարմիր բանակը պետք է ռազմական գործողությունների միջոցով անհապաղ լուծի Զանգեզուրի հարցը[29], այդ խնդրում ցուցաբերեց անհեռատեսություն: Մինչդեռ՝ Զանգեզուրի գրավման և խորհրդայնացման հարցի ձգձգումը թերևս կարող էր ծառայել իբրև լծակ և՛ Ռիգայի բանակցությունների ժամանակ, և՛ Լեռնային Ղարաբաղի խնդրում հայանպաստ արդյունքների ու լուծումների հասնելու համար:

Սակայն, Ռիգայի բանակցությունները, անկախ իրենց արդյունքից, այնուամենայնիվ, անհանգստություն առաջացրին քեմալականների շրջանում և որոշակի դեր խաղացին թուրք-անդրկովկասյան կոնֆերանսի հրավիրումն արագացնելու ու 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի պայմանագրի ոգով, Կարսում անդրկովկասյան հանրապետությունների հետ պայմանագրեր կնքելու գործում:

---

[27] Տե՛ս «Զանգեզուրի հերոսամարտը հրամաններում (1921 թ.)», կազմ. Վլ. Ղազախեցյան, Եր., 2008, էջ 10:

[28] Տե՛ս Ղազախեցյան Վլ., Հայաստանը 1920-1940 թթ., Ե., 2006, էջ 146:

[29] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 191, թ. 17:

ՄԻ ԱՂԲՅՈՒՐ ՎԱՆԱ ԻՇԽԱՆԻ ԵՎ ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ա. Ս. Եղիազարյան
Պատմական գիտությունների թեկնածու



Ֆրանսահայ գրող Վիկտոր Գարդոնը (Վահրամ Կաֆավյան) ծնվել է Վան քաղաքում 1903 թ.: Հայոց ցեղասպանությունից հետո ընտանիքի հետ գաղթել է Վանից և երկար դեգերումներից հետո հաստատվել Ֆրանսիայում:

1959 թ. լույս տեսավ նրա «Կյանքի կանաչ արևը» երկը, որին հաջորդեց «Զմրուխտավառ ասպետը» վեպը: 1970 թ. հրատարակվեց նրա «Բոսորագույն հայտնություն» աշխատությունը: Հետագայում հեղինակն ի մի բերեց իր երեք աշխատությունները «Զմրուխտավառ ասպետը» վերնագրով վեպում:

Ուշագրավ են հեղինակի հաղորդած տեղեկությունները 1915 թ. Վանի Այգեստան թաղամասի հերոսամարտի վերաբերյալ, որտեղ կարևոր տվյալներ կան Վանա Իշխանի (Նիկողայոս Միքայելյան, մահ.՝ 1915 թ.), Արամ Մանուկյանի և այլ հայտնի գործիչների մասին:

Պետք է նշել, որ Վահրամ Կաֆավյանի հայրը՝ Հարություն Կաֆավյանը, Արմենական կուսակցության Վանի ղեկավարներից մեկն էր, իսկ հորեղբայրը՝ Այգեստանի հերոսամարտում թուրքական զորանոցները հրկիզողներից «Հրկեզ Տիգրան»-ը:

Վահրամ Կաֆավյանի պատմությունը սկսվում է այն ժամանակներից, երբ Հայ Յեղափոխական

Դաշնակցությունն ու Արմենական կուսակցությունն առանձին գործունեություն էին ծավալում Վանում ինքնապաշտպանական խմբերի ստեղծման ուղղությամբ: 1915 թ. ապրիլ-մայիս ամիսներին երկու կուսակցությունները համատեղեցին իրենց ուժերը, որի արդյունքում կերտվեց այն փառահեղ հաղթությունը, որը հայոց պատմության մեջ է մտել որպես Այգեստանի 1915 թ. հերոսամարտ:

Ներկա մեջբերումները կատարված են հեղինակի «Զմրուխտավառ ասպետը» վեպից[1]:

***

Իշխանի և Արամի մասին հեղինակի առաջին հիշողությունը պատկանում է 1908 թ.: Այդ ժամանակ Վան քաղաքում արդեն զգացվում էր հերթական կոտորածի շունչը: Աբդուլ Համիդի կողմից ժամանակ առ ժամանակ իրականացվող կոտորածները հայության շրջանում հայտնի էին «դեպքեր» անունով: Դաշնակցական և արմենական «քաջեր»-ը[2] բերվել էին մարտական վիճակի: Մինչ այդ, ըստ հեղինակի՝ երբ արմենականների ժողովում քննարկվում էր ինքնապաշտպանության հնարավորությունը, Հարություն Կաքավյանը հայտարարեց. «Իշխանը քաշվել է սարերը, Փափազյանը և մյուսները չեն կարող ի մի հավաքվել... Արամը ձերբակալված է... Եկարյանը բացակա...»[3]:

Զարմանալիորեն թուրքերի շրջանում զգացվում էր մի տեսակ սպասողականություն: Շուտով պարզվեց պատճառը: Տեղի ունեցավ երիտթուրքական հեղաշրջումը: Վանում նույնիսկ թեթև բախում տեղի ունեցավ թուրք զինվորների միջև: Շուտով թուրքական զորքը հեռացավ Վանից:

Փաստորեն արդեն 1908 թ. Վանում, որպես ինքնապաշտպանության ղեկավարներ, հայտնի էին դաշնակցական գործիչներ Իշխանը, Վահան Փափազյանը (Կոմս)[4] և Արամը, ինչպես նաև արմենական Արմենակ Եկարյանը[5]:

Երիտթուրքերն Օսմանյան կայսրությունում հայտարարեցին «հուրիեթ», «ադալեթ», «ուխուվեթ», «մուսավաթ», այսինքն՝ «ազատություն», «արդարություն», «եղբայրություն», «հավասարություն»:

Այնուհետև սկսվեց համեմատաբար խաղաղ շրջան: Հարություն Կաքավյանը մեկնեց Կոստանդնուպոլիս, որտեղ հանդիպումներ ունեցավ երիտթուրքական ղեկավարների հետ: Այնտեղ նա

Վիկտոր Գարդոն (Վահրամ Կաքավյան)

հանդիպում է նաև ՀՅԴ անդամ, երիտթուրքական պառլամենտի պատգամավոր Ակնունու (Խաչատուր Մալումյան) հետ[6]:

Հարություն Կաքավյանի վերադարձից հետո սրվում են հարաբերությունները Վանի ՀՅԴ կառույցի և Արմենական կուսակցության միջև, որի հետևանքով Հարություն Կաքավյանը ցանկանում է հրաժարվել կուսակցությունում իր զբաղեցրած պաշտոնից[7]: Արմենական այդ ժողովին ներկա էր նաև Արմենակ Եկարյանը, որը կտրուկ դեմ է արտահայտվում նրա հրաժարականին:

---

[1] Տե՛ս Վիկտոր Գարդոն, Զմրուխտավառ ասպետը, Ե., 1990:

[2] Վանում «քաջեր» էին կոչվում ինքնապաշտպանական խմբերի մարտիկները:

[3] Տե՛ս Վիկտոր Գարդոն, Զմրուխտավառ ասպետը, էջ 187:

[4] ՀՅԴ գործիչ, երիտթուրքական պառլամենտի պատգամավոր (1876-1973):

[5] Արմենական կուսակցության գործիչ (1870-1925):

[6] Տե՛ս Վիկտոր Գարդոն, Զմրուխտավառ ասպետը, էջ 317:

[7] Նույն տեղում, էջ 340-341:

Վանա Իշխանը

Հեղինակի հաջորդ հիշատակությունները վերաբերում են արդեն 1915 թ. դեպքերին:

Վահրամ Կաքավյանը պատմում է, որ 1915 թ.՝ առաջին աշխարհամարտի սկսվելուց հետո, լուր հասավ, որ Կարս-Բաքու ուղղությամբ արշավող Էնվեր փաշայի բանակը ջախջախվել է ռուսական զորքի կողմից և որ Էնվեր փաշայի կյանքը փրկել է ոմն հայ Հովհաննես չավուշը:

Արդեն վանեցիներին էր հասել երիտթուրքական կառավարության հրամանը՝ զինվորագրվել թուրքական բանակին: ՀՅԴ-ն և արմենականները որոշում են ժամանակ շահելու համար ենթարկվել հրամանին: Հարություն Կաքավյանը որոշում է զինվորագրվել անձամբ: Այն պնդմանը, թե պետք չէ անդամագրվել, քանի որ Վանում ղեկավարներ են անհրաժեշտ, Հարությունը պատասխանում է. «Ղեկավարներ կմնան Արամը, Եկարյանը, Վռամյանը[8], Կուլօղլյանը[9]»[10]:

Սկսվում է Վանի պաշարումը Ջևդեթ փաշայի[11] ղեկավարած թուրքական զորքի և քրդական զինվորների կողմից: Վանի ազգային կուսակցությունները պատվիրակություն են ուղարկում Ջևդեթի մոտ: Պատվիրակությունը ղեկավարում էր Ա. Վռամյանը: Ըստ Վահրամ Կաքավյանի՝ Ջևդեթը պատվիրակությունից պահանջում է իբրև թե թուրքական բանակից դասալիք երեք հազար վանեցիներին հանձնել իրեն, հակառակ դեպքում սպառնալով կոտորել վանեցիներին: Ա. Վռամյանը նրանից խնդրում է դասալիքների ցուցակը: Ջևդեթը սպառնում է կազմել այդ ցուցակը՝ դասալիքների դիակները շարելով Վանի ավերակների վրա: Ջևդեթը պատվիրակությանը հայտնում է, որ պատրաստվում է 50-ական թուրք զինվոր տեղադրել Վանում գտնվող յուրաքանչյուր արտասահմանյան առաքելության շենքում (Վանում գործում էին ամերիկյան, շվեյցարական և գերմանական առաքելություններ)՝ իբրև թե նրանց անվտանգությունն ապահովվելու համար: Ա. Վռամյանը պատասխանում է, որ այդ պարագայում հայերն ի սկզբանե հրաժարվում են նրանց նկատմամբ տեղի ունեցած դժբախտությունների համար պատասխանատվությունից: Ջևդեթը սպառնալից հարցնում է. «Այդ դո՞ւք է, որ պիտի սպառնաք իմ պահակազորերին»: Ա. Վռամյանը, հիշեցնելով իր թուրքական պառլամենտի պատգամավոր լինելը, հարցնում է, թե Ջևդեթը ումի՞ց է ուզում ապահովագրել արտասահմանյան միսիաների անվտանգությունը: Միսիաների ղեկավարները՝ դոկտոր Ը-շըրը և հեր Սպերին հայտնում են, որ երկար տարիների ընթացքում հայերից բողոքելու որևէ առիթ չեն ունեցել:

Այնուհետև Ջևդեթը հայտարարում է. «Վռամյան բեյ, Շատախի հայերը ըմբոստացել են: Նրանք սպանել են զգալի թվով քրդեր ու ժանդարմներ»: Հայերը հայտնեցին, որ այդ իրադարձությունների մեղավորը տեղի թուրք գավառապետն է, որը սպանել է տվել հայկական դպրոցի ուսուցչին և ձերբակալել շատ հայերի: Ջևդեթը պահանջեց Իշխանի գլխավորությամբ Շատախ ուղարկել մի պատվիրակություն՝ ընդհարումները

---

[8] ՀՅԴ գործիչ, երիտթուրքական պառլամենտի պատգամավոր (մահ.՝ 1915 թ.):

[9] Ուսուցիչ, Վանի ինքնապաշտպանության ղեկավարներից մեկը:

[10] Վիկտոր Գարդոն, Զմրուխտավառ ասպետը, էջ 391-392:

[11] Թուրքական զորքի հրամանատարը 1915 թ. ապրիլ-մայիս ամիսներին:

Արշակ Վռամյան

դադարեցնելու և դրանց պատճառները պարզելու համար, խոստանալով գավառապետի հանցանքը պարզելու դեպքում կախաղան բարձրացնել նրան: Ա. Վռամյանը համաձայնում է Զևդեթի պահանջին[12]:

Շուտով թուրքական զորքերը զբաղեցնում են Այգեստանի վրա իշխող դիրք գրավող Համուդ աղայի զորանոցը[13]:

Արմենականներն ի սկզբանե դեմ էին, որ Իշխանը մեկնի Շատախ: Վահրամ Կաքավյանը հաղորդում է, որ Վանի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարը Իշխանն էր: Արմենականներն առաջարկում էին ուղարկել նվազ կարևոր մեկին, սակայն Ա. Վռամյանը պնդում է Իշխանի գործուղման վրա: Մնում էր իմանալ Արամի և իր՝ Իշխանի կարծիքը[14]:

Շուտով Վան հասան թուրքական բանակից փախած մի քանի վանեցիներ, բերեցին թուրքական բանակ զորակոչված հայ զինվորների կոտորածի լուրը[15]: Նույն գիշեր թե՛ դաշնակցականները և թե՛ արմենականները մարտական դրության բերեցին իրենց ինքնապաշտպանության խմբերը:

Հաջորդ օրը Հարություն Կաքավյանի տուն եկան Ա. Վռամյանն ու Իշխանը: Վահրամ Կաքավյանն այսպես է նկարագրում Իշխանին. «Իշխանի շրթունքները հաստ էին ու կարմիր: ...առատ ու երկար մազերը թափվում էին վզի վրա: Մատանիներ կրող նրա մատները շողշողում էին ամեն շարժումից: Նրանից գալիս էր լավանդի մշտատև բույր»[16]:

ՀՅԴ-ն և արմենականները ներքին համաձայնություն ունեին՝ ինքնապաշտպանության ժամանակ համադրելու սեփական գործողությունները: Նշված հանդիպումը նպատակ ուներ համադրելու ապագա գործողությունները: Որոշվում է մշակել Վանի ինքնապաշտպանության ծրագիր: Իշխանը հայտարարեց. «Մենք ունենք միայն հինգ հարյուր հրացան, հինգ հարյուր մաուզեր ատրճանակ, յոթանասուն հազար փամփուշտ և մեր բազուկները: Ուրիշ ոչինչ: Մեր դրությունը խիստ աննպաստ է: Բոլոր ստրատեգիական կետերը գրավել են թուրքերը և թնդանոթներն արդեն ուղղել են մեզ վրա: Մեր դիմադրությունը մեկ շաբաթից ավելի չի կարող տևել»: Ըստ Իշխանի՝ անհրաժեշտ էր ժամանակ շահել: Իշխանը հայտնեց, որ այդ նպատակով հաջորդ օրը մեկնում է Շատախ: «Դուք չպետք է գնաք: Շատ մեծ պարտականություն ունեք դուք Վանում»,- փորձեց հակառակվել Հարություն Կաքավյանը: «Այո,- պատասխանեց Իշխանը,- բայց Շատախի հայերը ոչ ոքի չեն լսի, բացի ինձանից: Հենց միայն իմ ներկայությունն այդ լեռներում՝ հանդարտ կպահի բոլոր քրդերին»: Հարությունը փորձեց կրկին հակաճառել, սակայն Ա. Վռամյանը հայտնեց, որ ՀՅԴ տեղական կառույցի որոշումն է այդպիսին: Ի վերջո, Հարություն Կաքավյանն առաջարկեց, որ «Վանի ինքնապաշտպանության ուժերի հրամանատար պարոն Իշխանը հայտնի իր կարծիքը»: Իշխանն ասաց. «Անկարելի է դիմադրել ո՛չ Այգեստանում, ո՛չ էլ Քաղաքում[17]: Ուրեմն ամեն գնով խուսափենք մարտից: Եթե հաջողություն չունենանք, մեր զինված ուժերը դուրս կգան քաղաքից ամբողջ քաջառողջ բնակչության հետ, կամրանանք Վարագա սարի վրա և

[12] Տե՛ս Վիկտոր Գարդոն, Զմրուխտավառ ասպետը, էջ 419-421:

[13] Նույն տեղում, էջ 418:

[14] Նույն տեղում, էջ 421:

[15] Նույն տեղում, էջ 422:

[16] Նույն տեղում, էջ 424:

[17] Քաղաքամեջ:



Արամ Մանուկյան

մարտեր մղելով՝ կփորձենք հասնել ռուսներից գրավված Պարսկաստան»: Իշխանը տեղեկացրեց նաև, որ ինքնապաշտպանության հրամանատարությունն իր բացակայության ընթացքում դրված է Բուլղարացի Գրիգորի և Կայծակ Առաքելի վրա[18]: Նրանց էր կցվելու նաև Արմենակ Եկարյանը: Նրանց ընդհանուր ղեկավարությունն իրականացնելու էր Արամը: Որոշվեց, որ թուրքերի հարձակման պարագայում Վանի հայությունը կդիմի ինքնապաշտպանության: Վահրամ Կաքավյանը պատմում է, որ իր տատն Իշխանի և Վռամյանի հեռանալուց հետո ասել է. «Այս երկու մարդիկ... Գաբրիել հրեշտակի ձեռքը իջել է նրանց գլխին... ողջ չեն մնա»[19]:

Երկու օր հետո Հարություն Կաքավյանի մոտ է գալիս նկարիչ Փանոս Թերլեմեզյանը: Նա բերում է սահմռկեցուցիչ լուրը. Զևդեթն այդ օրն առավոտյան իր մոտ էր հրավիրել Արամին և Ա. Վռամյանին: Նրանք մեկնել են միմյանցից առանձին: Ա. Վռամյանը ձերբակալվել էր, իսկ Արամին ճանապարհին, բարեբախտաբար, այդ լուրը հասցրել է մի հայ, որից հետո Արամը թաքնվել է: Իսկ Իշխանն ու նրա ուղեկիցները ապանվել են Հիրճում՝ Շատախում, երբ հյուրընկալվելիս են եղել մի քուրդ ցեղապետի մոտ: Պարզ է, որ Զևդեթի հաջորդ քայլը լինելու էր Արամի ձերբակալությունը՝ Վանի հայությանն իսպառ գլխատելու համար:

Հաջորդ օրը Զևդեթը հայկական պատվիրակությանը հայտնեց, որ Իշխանը սպանվել է, քանի որ չի կատարել հրամանը՝ ներկայանալու Զևդեթին, իսկ Ա. Վռամյանի վերաբերյալ ինքը հրաման ունի նրան ուղարկելու Կոստանդնուպոլիս[20]: Զևդեթը ասաց նաև, որ ուզում է տեսնել Արամին՝ դասալիքների հարցը նրա հետ քննարկելու համար: Պատվիրակությանը ճանապարհին հանդիպած միսիոներ դոկտոր Ըշլրը խորհուրդ է տալիս, որպեսզի հայերը, սեփական կյանքը փրկելու համար, դիմեն ինքնապաշտպանության[21]:

Հասավ ճակատագրական ժամը: Վանեցիները՝ Արամ Մանուկյանի գլխավորությամբ, որին այդ ժամանակ թուրքերը սկսում են կոչել Արամ փաշա[22], դիմում են ինքնապաշտպանության:

Վահրամ Կաքավյանը, որն այդ ժամանակ 12 տարեկան էր, կատարում էր նամակատարի պարտականություն հայկական դիրքերի միջև: Նա դիրքերից մեկի հրամանատարի նամակը տանում է գլխավոր շտաբ և, տեսնելով Արմենակ Եկարյանին, նամակը հանձնում է նրան: Վերջինս նամակը փոխանցում է ղեկավարին՝ Արամին, սակայն Արամը խնդրում է նրան անձամբ կարդալ այն: Վահրամ Կաքավյանն այսպես է հիշում այդ դրվագը: «Արամը ֆես էր դրել... Դիմադրության ղեկավարը թուրքական գլխարկ էր դրել: ...Արամը կռահեց հայացքի նշանակությունը: «Տղա՛ս, մենք հարկադրված ենք պահպանել մեր կյանքը և ապստամբներ չենք»»[23]: Այնուհետև Արամը գովեց

---

[18] Հայ ազգային-ազատագրական շարժման գործիչներ:

[19] Տե՛ս Վիկտոր Գարդոն, Զմրուխտավառ ասպետը, էջ 424-428:

[20] Վռամյանը Զևդեթի հրամանով խեղդամահ արվեց Վանա լճում:

[21] Տե՛ս Վիկտոր Գարդոն, Զմրուխտավառ ասպետը, էջ 428-429:

[22] Նույն տեղում, էջ 468:

[23] Թուրքերը վանեցիների ինքնապաշտպանությունը փորձում էին ներկայացնել որպես ապստամբություն, իսկ Արամին՝ որպես ապստամբապետ: (Տե՛ս Ասրյան Ա., Արամ Մանուկյան, կյանքը և գործունեությունը, Ե., 2009, էջ 33):

ինքնապաշտպանական ջոկատների զինվորներից մեկին: Ըստ Վահրամ Կաքավյանի, այնքան բարձր էր Արամի հեղինակությունը, որ «այդ գովեստը արտակարգ չափեր էր ընդունում Արամի բերանում»[24]: Հետո Արամին հետաքրքրեց Վահրամի նման մի փոքրիկ տղայի ներկայությունը մարտական գործողությունների կիզակետում: Վահրամն ասաց, որ ցանկացել է դիտել թուրքական զորանոցի հոդս ցնդելը[25]: «Այսպիսի տղաներ ունեցող ազգը երբեք չի անհետանա այս նզովյալ աշխարհից»,- ասաց Արամը[26]:

Վահրամ Կաքավյանը հիշում է Արամի վերաբերմունքն Այգեստանի ինքնապաշտպանության ղեկավարներից Արմենակ Եկարյանի նկատմամբ: Դաշնակցական ղեկավարը մեծահոգի, հարգալից և ջերմ էր արմենական մարտական ընկերոջ նկատմամբ[27]:

Շուտով ի հայտ է գալիս Վանում հավաքված հայության կերակրելու խնդիրը: Արամի հանձնարարությամբ հայ զինվորները մեկնում են հայերից լքված գյուղերը՝ թաքցրած սննդամթերքը գտնելու և Վան բերելու համար[28]:

Վահրամը հիշում է նաև, որ Վանի ինքնապաշտպանության շտաբում, երբ Արամը հարցրեց ռուսական զորքի գտնվելու վայրի մասին և իմացավ, որ վերջիններս դադարեցրել են առաջխաղացումը դեպի Վան, ասաց. «Չգիտեմ՝ լա՞վ բան արեցինք, որ հայտնեցինք նրանց, թե դեռ չենք կոտորվել»[29]: Արամը կարծես կանխազգացել էր, որ ռուսները շուտով լքելու են հայերին՝ նրանց դեմ առ դեմ թողնելով թուրքերի հետ: Այդ իսկ պատճառով, ամիսներ անց, վանեցիները հեռանալու են իրենց բնօրրանից:

Այնուհետև թուրքերի կողմից գրավվում է Վարագա սարը: Երբ Վահրամը հարցրեց թուրքերի կողմից գրավվելուց հետո Վարագա վանքում ամփոփված Արծրունյաց թագավորների շիրիմների ճակատագրի մասին, Արամը պատասխանեց. «Պետք է փրկել նախ ողջերի՛ն, Վահրա՛մ: Մեռյալները ապահովության մեջ են»[30]:

Վահրամ Կաքավյանը հետաքրքիր մի պատմություն է պահպանել նաև Բուլղարացի Գրիգորի կողմից ձուլված թնդանոթների գործածման վերաբերյալ: Դրանք դիրքից դիրք էին փոխադրվում՝ կապված իրավիճակի փոփոխության հետ: Ահա՛, երբ դրանք պետք էր տեղափոխել դիրքերից մեկը, մի զինվոր ժամանակ շահելու համար կեղծ բանակցությունների մեջ է մտնում թուրքերի հետ: Նա «հայտնում» է, որ իրենք որոշել են անձնատուր լինել: Երբ թուրքերն անակնկալի են գալիս, հայ զինվորն ասում է, որ՝ «Այդ մեր մեծավորի՝ Արամ փաշայի հրամանն է»: Թուրքերը բղավում են, թե Արամը փաշա չէ և որ իրենք նրան կախաղան են բարձրացնելու: Այդ ընթացքում թնդանոթները տեղադրվում են դիրքում և կրակ բացում թուրքերի վրա[31]:

Արամի մասին Վահրամ Կաքավյանի վերջին հիշողություններից մեկը կապված է Վանի թուրքական ոստիկանության շենքի պայթեցման հետ՝ նրա հորեղբայր «Հրկեզ Տիգրանի» կողմից: Շենքը պայթեցվում է, որից հետո հրկիզողին շնորհավորելու համար դեպքի վայր է գալիս անձամբ Արամը: Նրա հետ էին Բուլղարացի Գրիգորն ու Արմենակ Եկարյանը: «Արամը վազեց դեպի Տիգրանը և գրկեց նրան: «Շնորհակալություն,- ասաց նա,- շնորհակալություն բոլորիս կողմից»»[32]:

Վերջին անգամ Վահրամն Արամին տեսավ արդեն Վանի ինքնապաշտպանության հաղթանակից հետո, երբ Արամը նշանակվել էր Վասպուրականի նահանգապետ[33]:

***

Այսքանով ավարտվում են Վահրամ Կաքավյանի հաղորդած տեղեկությունները Վանա Իշխանի և Արամի մասին: Այդ տեղեկություններում վառ կերպով ընդգծված են հայ ազատամարտի երկու նվիրյալների, ինչպես նաև էլի շատերի գործունեության տարբեր կողմերը:

---

[24] Վիկտոր Գարդոն, Զմրուխտավառ ասպետը, էջ 450-451:

[25] Այդ օրը Վանի ինքնապաշտպանության մարտիկների կողմից պայթեցվել էր Համուդ աղայի զորանոցը:

[26] Վիկտոր Գարդոն, Զմրուխտավառ ասպետը, էջ 451-452:

[27] Նույն տեղում, էջ 460-461:

[28] Նույն տեղում, էջ 462:

[29] Նույն տեղում:

[30] Նույն տեղում, էջ 463:

[31] Նույն տեղում, էջ 467-469:

[32] Նույն տեղում, էջ 494:

[33] Նույն տեղում, էջ 514:

ԽՕՍՔ՝ ՍԱՐԳԻՍ ՁԷՅԹԼԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Թերթելով «Դրօշակի» այն տարիների էջերը, որ խմբագրում էին Սարգիս Ձէյթլեանի գրչով, կարդալով նրա յօդուածներն ու, յատկապէս, խմբագրականները, որ զգայուն արձագանքներն էին ժամանակի իրադարձութիւններին ու մտայնութիւններին, մեր առջեւ գծագրում է դաշնակցական հմուտ կազմակերպչի ու իմացական մտաւորականի իւրայատուկ կերպարը: Նա Հայ Դատի մեկնաբանն էր, Հայ ազատագրական պայքարի նուիրեալ տեսաբանը, Հայկական արեւելումի եւ Դաշնակցութեան ողջ արժէհամակարգի հրապարակախօսը:

Ինչո՞ւ հէնց նա ընտրուեց հակադաշնակցական ոճրագործութեան թիրախ. որովհետեւ նրա մասն էր դրուած ժամանակի զարկերակի վրայ, որովհետեւ նրա գրիչն էր անողոք, անկաշկանդ, որովհետեւ նա էր անհանգստացնում թշնամիներին, որովհետեւ նրա վերացումն էր թւում փրկութեան միջոց:

Միշտ էլ, ցաւօք, խփում են առաջին շարքերին: Եւ մեծ հաշուով, միշտ էլ վրիպում են: Որովհետեւ՝ ընկած առաջին շարքի փոխարէն երկրորդն է առաջին դառնում, երրորդը եւ այսպէս շարունակ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը իր հարիւրհանամեայ պատմութեան ընթացքում շարքափոխութեան բազմաթիւ օրինակներ է տուել:

Եւ ոչ մի ընկած ընկեր անհետ չի կորել: Նրանք անվերջ թարմացող առաջին շարքում են:

«Դրօշակ» Երեւան, 2010 թ. մարտի 12

ԴՐՕՇԱԿ
100 տարի առաջ

№ 3—4 (211) XX ՏԱՐԻ ՄԱՐՏ—ԱՊՐԻԼ 1910

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse).

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

Պարլամենտական ընտրութիւնները Ֆրանսիայում

Աչքի են զարնում օրէնսդրական այդ ընտրութիւնների մէջ երկու խոշոր իրողութիւն՝ յետադիմական բանակի վայրէջքը և սոցիալիզմի վերելքը:

Զուր ճիգեր են թափում Ֆրանսիայի պահպանողականները՝ միապետութիւնը էլ չի վերադառնայ: Հանրապետական գաղափարը աւելի քան երբևէ շեշտուեց ուժեղ և տիրական: Ո՞վ է սակայն իսկական յաղթանակողը հանրապետական բանակի մէջ: Դա նրա ծայր-ձախակողմեան թևն է՝ սոցիալիստականը: Սոցիալիստ պատգամաւորների թիւը աճում է 23-ով: Սոցիալիստ ընտրողների թիւը 800,000-ից բարձրանում է մէկ միլիոն երկու հարիւր հազարի:

Թուերը, իրենց չոր, ահաւոր լեզուով իրաւացի անհանգստութիւն են պատճառում փողի և առանձնաշնորհումի դասակարգերին: Սոցիալիզմը աճում է թէ քաղաքներում, թէ դաշտերում, ի հաշիւ բուրժուա-արմատական կուսակցութիւնների, որոնք բոլորն էլ ներկելով իրենց հաւատամքն ու ծրագիրը սոցիալիզմի գունաւորութեամբ, կարծում էին միանգամ ընդմիշտ գրաւել են ժողովրդային զանգուածներին և տիրել ասպարէզին:

Արմատականները և արմատական-սոցիալիստները, որ կազմում են այժմեան ֆրանսիական պարլամենտի ճնշող մեծամասնութիւնը, խիստ զգալի կորուստներ ունեցան: Այնինչ իսկական սոցիալիստների քանակը պարլամենտի մէջ բարձրացաւ 76-ի:

Չափազանց մխիթարական է Ֆրանսիայի քաղաքական-հասարակական էտոլիւցիան: Մի կողմից հակահանրապետական տարրերի չքացում, միւս կողմից հանրապետական անիւի ձախացում...Հակասական թռիչքների կլասիկ հայրենիքը կարծես արդէն գտել է իր բնականոն առաջադիմութեան աւազանը: Կատարուեց պետութեան և եկեղեցու բաժանումը, որ ինքնին մեծ մի յեղաշրջումն էր: Ֆրանսիական մեծամասնութիւնը հանդէս եկաւ աշխարհի առաջ, որպէս միանգամայն ազատուած կղերական համաշխարհային պատուհասից: Ֆրանսիան առհասարակ բաւական աղքատ է զուտ սոցիալական ռէֆորմներով: Հարևան միապետութիւնները, Գերմանիան և Անգլիան, որոշ խնդիրներում աւելի առաջ են գնացել: Աշխատաւորական ապահովագրութեան հարցը աւելի լայն չափերով է իրագործուած Գերմանիայում: Այժմ ահա պարլամենտը փակուելուց առաջ քուէարկեց ահագին մեծամասնութեամբ ծերունիների թոշակի ռէֆորմը, որոնց տրուած օգնութիւնը մինչև օրս սոսկ բարեգործական բնոյթ ունէր: Այսուհետև ազգը ճանաչում է աշխատաւոր մարդու վերաբերմամբ իրաւունք՝ ստանալու իր ծերութեան տարիներում հաւաքական ազգային բարիքներից իր բաժինը, որին նա արժանացել է երկարատև աշխատանքով: Ֆրանսիացի աշխատաւորը, բոլորելով իր 65 տարին, այսուհետ կ'ունենայ որոշ թոշակ, որը կ'աճի աստիճանաբար պետութեան աստիճանական ռամկավարացման հետ...

Սոցիալական կամ աշխատաւորական օրէնսդրութիւնը այդ խոշոր ակտը կատարեց շնորհիւ սոցիալիզմի յարաճուն ազդեցութեան: Միւս կողմից, բուրժուա-արմատական ու դեմոկրատ կուսակցութիւնները եթէ չեն ուզում կորցնել իրենց ազդեցութիւնը ժողովրդային զանգուածների մէջ, պէտք է հետզհետէ ձախանան անհրաժեշտաբար, պէտք է ձայնակցեն սոցիալիստներին, պէտք է գրկեն հետզհետէ լայն, արմատական և բարենորոգչական գործունէութեան դրօշը:

Սակայն ոչ ոք չի կարող ստանձնել գուշակի դերը հասարակական զարգացման դիմաց: Հնարաւոր է, որ բուրժուական բոլոր հատուածները, անգամ՝ ամենառամկավարները, սոցիալիզմի ու աշխատաւոր ընդհանրութեան այդ յարաճուն գրոհի դիմաց՝ փոխեն ֆրօնտը դէպի յետ, փարին սոցիալական ռէակցիային, միանան՝ «սրբազնագոյն սեփականութիւնը» փրկելու համար, «կարմիր ուրուականը» հալածելու համար...

Առայժմ Ֆրանսիայի էտոլիւցիայի ընդհանուր ձգտումը միանգամայն յուսալի ճամբու վրայ է և մենք սրտանց ողջունում ենք այն:

1946-1948 թթ.

հայրենադարձությունը և նրա դասերը. հայրենադարձության հիմնախնդիրն այսօր

Երևան, 2009, 406 էջ



ՀՀ Սփյուռքի նախարարության՝ հայրենադարձությունը խրախուսող ձեռնարկները բազմաթիվ են ու բազմատեսակ՝ սկսած սփյուռքահայ երիտասարդների ամենամյա հայաստանագնացություններից մինչև ամենատարբեր մակարդակների քննարկումներ ու գիտաժողովներ: Այս միջոցառումների շարքում իր տարողությամբ առանձնացավ, թերևս, 2008 թվականի դեկտեմբերի 12-14-ը Ծաղկաձորում կազմակերպված համահայկական գիտաժողովը, որին ներկայացված էին հայրենադարձության երևույթը ամենատարբեր կողմերից ուսումնասիրող երեք տասնյակից ավելի զեկուցումներ: Հատկապես տպավորիչ է զեկուցաբերների կազմը. փիլիսոփաներ, պատմաբաններ, հոգեբաններ, իրավաբաններ, սոցիոլոգներ, գրականագետներ ու լեզվաբաններ՝ Հայաստանից եւ արտերկրից: Գիտաժողովի նպատակն էր, ինչպես իր բացման խոսքում նշել է ՀՀ Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը, վերլուծել 1946-1948 թվականների հայրենադարձությունը, վեր հանել այդ

հայրենադարձության ծրագրային ու կազմակերպչական սխալները, դասեր առնել դրանցից եւ գիտական լուրջ հիմք ստեղծել հայրենադարձության ներկա գործընթացներում դրանք թույլ չտալու համար:

Ասենք նաև, որ գիտաժողովի կազմակերպման գործում ՀՀ Սփյուռքի նախարարությանը մեծապես աջակցել են ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան եւ նրա Պատմության ինստիտուտը, Երևանի պետական համալսարանը, ինչպես նաև «Նորավանք» գիտակրթական հիմնադրամը:

Հայ ընթերցողն այսօր հնարավորություն ունի ծանոթանալու նշված գիտաժողովի նյութերին, որոնք ՀՀ Սփյուռքի նախարարությունն արդեն հրատարակել է առանձին գրքով: Այն բացվում է գիտաժողովին հղված ՀՀ Նախագահի եւ Ամենայն Հայոց կաթողիկոսի ուղերձներով եւ ՀՀ վարչապետի ելույթով: Դրանցում կարևորվում է հայ ժողովրդի կյանքում հայրենադարձություն երևույթն առհասարակ, համոզմունք արտահայտվում, որ հայրենիքը միշտ սպասում է իր զավակներին եւ երբեք ուշ չէ տուն վերադառնալ: Իսկ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի ելույթում կան այսպիսի տողեր, որոնք թույլ են տալիս լավագույնս հասկանալ, թե ինչ կարող են տալ միմյանց Հայաստանն ու Սփյուռքը, եթե այնպիսի մի հայրենանվեր գործ, ինչպիսին հայրենադարձությունն է, մշտապես լինի ուշադրության կենտրոնում. «Աշխարհասփյուռ հայության թիվն ավելին է, քան Հայաստանում ապրողների թիվը, եւ հասկանալի է, որ Հայաստանն իր Սփյուռքով որակապես այլ իրողություն է, քան առանց Սփյուռքի: Քսանմեկերորդ դարում մենք այլևս չենք կարող հաշվի չառնել այս հանգամանքը... Մեր աչքի առջև այսօր ձևավորվում է նոր աշխարհ, եւ մենք իրավունք չունենք սխալվելու, սխալ կանխատեսումներ իրականացնելու, սխալ մոդելներ ընտրելու, որպեսզի, տարիներ անց, նորից ներողություն չխնդրենք անպտուղ հայրենադարձության ծրագիր իրականացնելու համար: ...Տարածքը, որտեղ բնակվում է հայը, այնքան կարևոր չէ, որքան այդ հայի ինքնությունը. ինչպես է նա մտածում, ինչպես է վերաբերվում Հայաստանին՝ հայրենիքին եւ ինչպես է նա ընդհանրապես ընկալում ազգությունը»: Թվարկված այս խնդիրները լավագույնս արծարծված են Մարիա Թիթիզյանի «1946-48 թվականների հայրենադարձությունը ականատեսների հուշերում», Արմինե Կոնդակչյանի «Հայրենադարձների բռնաճնշումները ստալինյան ժամանակաշրջանում», Խաչիկ Տեր-Ղուկասյանի «Հայրենադարձութեան միտումները մերօրեայ Սփիւռքի մէջ», Ռուբինա Փիրումյանի «Հայրենադարձության որոշ հիմնահարցերի շուրջ», Ալբերտ Աճեմյանի «Հայրենադարձության հասկացությունը եւ դրա իրականացման կարելիությունը», Էդիկ Մինասյանի «Հայրենիք-Սփյուռք կապերի հիմնական ուղղությունները», Միխայիլ Կուզուբի «Կրասնոդարի մարզի հայերի սոցիալ-մշակութային բնութագիրը հայրենադարձության համատեքստում» (ռուսերեն) զեկուցումներում:

Գրքում տեղ են գտել նաև պատմական վավերագրեր, լուսանկարներ, բերված են թվային տվյալներ հայրենադարձության, սփյուռքյան հայկական ձեռնարկությունների մասին:

Էդիկ Անդրեասյան

Գեղանկարիչ Ռաֆայել Մելիքյանը ծնվել է 1983թ.-ի հունվարի 2-ին Երևան քաղաքում: Նկարել սկսել է 9 տարեկանից: 1998-2004 սովորել է Երևանի Գեղարվեստի Պետական Ակադեմիայում: 2008թ.-ից Հայաստանի Հանրապետության Նկարիչների Միության անդամ է:

1995թ.-ից սկսած ունեցել է բազմաթիվ անհատական ցուցահանդեսներ Հայաստանում, ինչպես նաև մասնակցել է մի շարք միջազգային ցուցահանդեսների և արժանացել բարձր գնահատականի: 2010-ին նախատեսվում է անհատական ցուցահանդես Լոնդոնում:

Ռաֆայել Մելիքյանի նկարները պահվում են բազմաթիվ ցուցասրահներում և անհատական հավաքածուներում (Կանադա, ԱՄՆ, Ֆրանսիա, Հունաստան, Ռուսաստան, Իսպանիա, Վատիկան, Անգլիա, Լիբանան, Հայաստան): Նրա «Մայրություն» նկարը 2009թ-ին շնորհ է բերվել Ֆրանչեսկո Բուռանելլիի՝ Վատիկանի Մշակույթի նախարարի կողմից և ցուցադրվում է Վատիկանի թանգարանում:



Ռաֆայել Մելիքյան






ԴՐՕՇԱԿ